

997

998

999

613

U-35



ԿԵԱՆՔ

ՄՐԻՑ ԱՌԱՔԵԼՈՑ

(ՈՏԱՆԱԻՈՐ)

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԳՐԵՑ

Դ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ


Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԿՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1897

891.99-1

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ



ԿԵԱՆՔ

ՍՐԲՈՅ ԱՌԱՔԵԼՈՅ

(ՈՏԱՆԱԻՈՐ)

ՊԱՏԿԵՐԱԶԱՐՈՂ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1897

16182

ՏՊԱՐԱՆ, ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Թիւ 27, Ֆինանսերըար Եօզուշու, Կ. Պոլիս:

10030-57

معارف عمومیہ نظارت جلیلہ سنک ۶ ربیع الآخر ۱۳۱۵ و ۲۲ آگستوس
تاریخی و ۳۷۱ نومروی رخصتنامه سیله طبع اولمشدر

ՅԱՌԱՋԱԲԱՆ

«ԿԵԱՆՔ ՏԷՐ ՅԻՍՈՒՍԻ»-ն ընթերցողը տեսան ,
Թէ ի՛նչպէս Աստուած վասն մեր փրկութեան
Խրկեց սիրելի , Միածին Որդին
Ըլլալ Ազատիչ հէք մեղաւորին :

Նա եկաւ աշխարհ եւ մարմին առաւ ,
Շնորհընկալ Կոյսին Անդրանիկն եղաւ .
Մեծցաւ , զարգացաւ , մարմնով , հասակով ,
Յաջս ամենեցուն շնորհք գտնելով :

* * *

Երսուն տարիներ անցան եւ գացին ,
Բէթլէհէմի Աստղն , Երգն հրեշտակային ,
Մոգերուն գալուստն , յուզումն Հերովդի ,
— Բոլորն մոռացման քողովն ծածկուի :

Յանկարծ գայ Յիսուս ի գետն Յորդանան ,
Եւ կատարելով պարտքն մկրտութեան ,
Աստարէզ մտնայ , եւ իբր Արեգակ ,
Հորիզոնէն վեր ելլէ շարունակ :

* * *


Երեք տարիներ , ցերեկ եւ գիշեր ,
Տէր Յիսուս գործէր , նաեւ աղօթէր .
Բոլոր իր սուրբ կեանք ցոյց տանք Բի խօսքով
« Նա իւր յըստէր Բարեւ շնորհակալ » :

Սակայն պէտք էր որ Յիսուս զոհ ըլլար ,
 Փակեալ դրախտին դռները բանար ,
 Ուստի խաչին մահն սիրով յանձն առաւ ,
 Մեռաւ եւ յարեաւ փառօք համբարձաւ ,
 Ասով փրկութեան մեծ գործն աւարտեց ,
 Յաղթեց սատանան , մարդըս ազատեց ,
 Եւ Հօր Աստուծոյ աջ կողմը նստած
 Առաջ կը վարէ գործն համայն ազգաց :
 Թողուց Նա սակայն իրեն յաջորդներ ,
 Իր ընտրած , կրթած , սուրբ Առաքեալներ ,
 Որ յառաջ տանին մեծ գործն փրկութեան ,
 Ուսուցանելով Սուրբ Աւետարան :

* * *

Ներկայ հատորով արդ պիտի ջանանք ,
 Պարզել ձեր առջեւ Առաքելոց կեանք :
 Հոն պիտի պատմենք անոնց հրաչքներ ,
 Բարոգութիւններն , ճամբորդութիւններ :
 Եւ նեղութիւններն՝ զորոնք յանձն առին
 Մինչ Աւետարանը կը քարոզէին :
 Հոն պիտի տեսնէք որ տկար մարդկանց
 Զանքերն միշտ՝ կ'օրհնէ թագաւորն փառաց :





ԿԵԱՆՔ ՍՐԲՈՅ ԱՌԱՔԵԼՈՅ

Ի. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՄԱՏԱԹԻԱՅԻ

ԹԱՓՈՐ լեռանը գաղաթն հաւաքեալ
 Խումբ մ'արանց, կանանց, յուզեալ, զգածեալ,
 Մին ի նոցանէ յարեալ Յիսուսն է
 Որ իրեններէ այժմ հրաժեշտ կառնէ ։
 Խօսի անոնց հետ սիրալիւ կերպով,
 Իւրաքանչիւրին յարմար խօսքերով.
 Ըսէ որ պիտի ըլլան վկաներ,
 Եւ թէ եւ անոնք այժմ յարմար չեն գեռ.
 Պիտի գայ Հոգին զայնս զօրացունէ
 Եւ ամէն կերպով զանոնք պատրաստէ ։
 Գացէք, ըսէ Տէրն, աշխարհըն համայն,
 Եւ քարոզեցէք Սուրբ Աւետարան .

Առ այժմ կեցէք դուք յերուսաղէմ,
Մինչեւ որ Հոգին ձեզի առաքեմ.
Զայս ըսէ և Տէրն ձեռքերն տարածէ
Եւ անոնց բոլորն օրհնելով օրհնէ :



Արդ Փրկչին ոտքերն դեանէն կտրուին
Դէպի վեր ելլէ աշխարհն երկնային.
Վեր նային բոլորն ապշած, զարմացած,
Իրենց գլուխն է երկրէս վերացած :

* * *

Իսկոյն երկու մարդ, հագած սպիտակ,
Որոնք էին Տէրոջ դեսպան, հըրեչտակ,
Անոնց քով հասնին, դէմերնին կանգնին,
Եւ բոլոր խումբին այսպէս կը խօսին : —
« Ո՛վ Գալիլիացի մարդիկ ինչ նայիք :

Ինչո՞ւ տաղնապիք, ինչո՞ւ խռովիք,
Այս Յիսուան ինչպէս ձեզմէ զատուեցաւ,
Ինչպէս որ երկրէս յերկինս համբարձաւ,
Վերստին Ինքը այնպէս պիտի գայ,
Միւսանգամ պիտի նա վերագառնայ :

Հրեշտակներն իրենց տեղերնին դարձան
Սշակերտներն ալ սուրբ քաղաք եկան.
Ըստ սովորութեան ելան վերնատուն
Գովաբանելու Յիսուսի անուն.
Միաբանութեամբ անդ աղօթէին,
Խնդրուած, աղաչանք մատուցանէին.
Յիսուսի մայրը Մարիամ ալ հոն էր,
Նաեւ եղբայրներն և ուրիշ կիներ :

* * *

Անդ ի վերնատան էին հաւաքեալ
Իբր հարիւր քրոսան այր հաւատացեալ,
Երբ Պետրոս ելաւ, սապէս խօսեցաւ —
« Մարդիկ եղբայրներ, բերնով Դաւիթին
Յուդայի համար կըսէ Սուրբ Հոգին,
Թէ նա չարաչար պիտի կորսուէր,
Թէեւ մեզ նման մի առաքեալ էր.
Մեզի հետ ունէր պաշտօն և բաժին
Եւ միշտ կը լսէր զձայն Յիսուսին.
Աւանջ, նա մասնեց Տէրն և ուրացաւ
Զնջին մ'ազարակն, վարձքովն անիրաւ,

Արեան ագարակն , Ակեղդամայի ,
Գերեզման եղաւ օտար պանդուխտի ,
Անդ Յուդայ ինքդինք ծառէն կախելով
Գլխիվայր ինկաւ ահռելի կերպով .
Ո՛հ, նա մէջքէն հոն ճեղքուեցաւ ,
Փորոտիք բոլոր յերկիր թափեցաւ .
Իր բնակութիւն եղաւ աւերակ ,
Մնաց ամայի , անշուր , անբնակ :
Արդ՝ անոր պաշտօն ուրիշի մը առաւ
Սաղմոսաց գրքին մէջ է հրամայեալ .
Ուստի պէտք է մեզ այս եղբայրներէն ,
Որ մեր հետ էին առաջին օրէն ,
Մկրտութենէն մինչ օրն Համբարձման՝
Մի վկայ ընտրել Տեառն յարութեան :


* * *

Արդ երկու հոգի հոն կանգնեցնեն
Որ անոնց վրայ վիճակը ձգեն ,
Նախ աղօթեցին « քննողդ սրտերու ,
Յայտնէ թէ ասոնց մըրը կընտրես դու » :
Վիճակը կ'ելլէ Մատթիային ,
Եւ նա կըլլայ այժմ տասներկուքէն մին :



2. ՊԷՆՏԷԿՈՍՏԷ

Պէնտէկոստէի օրը հասնելուն ,
Ժողովեալ էին ամէնքն վերնատուն ,
Յանկարծ եղաւ մեծ ձայն մի երկնային
Նման սաստկաշունչ հովի մը ձայնին :
Ամբողջ տունն լեցաւ այս ահեղ ձայնով ,
Լեցուց բոլորը ահով և դողով ,
Յայնժամ կրակէ լեզուք երեւցան ,
Եւ ամէն մէկուն ալ վրայ նստան :



Լեցուեցան բոլորն ալ Հոգւով Սրբով ,
Ըսկսան խօսիլ այլ լեզուներով :


* * *

Անդ յերուսաղէմ էին հաւաքուած,
 Բարեպաշտ Հրեայք չորս կողմէն եկած .
 Որք երբ լսեցին ձայնն խռովեցան ,
 Եւ լեզուներուն վրայ զարմացան :
 « Հնա՞ր է որ այս Գալիլեացիներ
 Խօսին մեր ամէն մէկուն լեզուներ » .
 Կսքանչանային , կը զարմանային ,
 Ոմանք ծաղրելով այսպէս կըսէին . —
 « Արբեալ են ասոնք , գինով են , գինով ,
 Լեցուած են ասոնք նոր գինիներով » .

* * *

Արդ Պետրոս ելաւ կանգնեցաւ յոսին
 Իր հետ մեծաւանք կարգաւ կը շարուն :
 Ո՛վ Հրեայ մարդիկ , ըսէ . լսեցէք ,
 Մենք չենք գինովցած ինչպէս կը կարծէք :
 Այս է կատարումն մարգարէութեան ,
 Որ Յովէլ ըրաւ յանուն իւր Տեառն .
 Վերջին օրերը , կրտէ Տէր Աստուած ,
 Հոգիս պիտի տամ ես բոլոր մարդկանց .
 Տղաքներ պիտի մարգարէանան ,
 Երիտասարդներ տեսիլքներ տեսնան .
 Ծերեր , ծառայներ , նաեւ աղախին ,
 Իմին սուրբ հոգիս պիտի ընդունին :
 Վերը երկինքը բազում հրաշքներ ,
 Եւ վարը երկրի վրայ նշաններ ,

Ծուխ և մառախուղ , արիւն և կրակ ,
 Խաւարի լուսին նաեւ արեգակ ,
 Իսկ նա որ դոչէ Տէրովը անուն ,
 Պիտի ստանայ անշուշտ փրկութիւն :
 Իսրայելացի մարդիկ , լսեցէք ,
 Այն Նազովրեցին , զոր լաւ ճանաչէք ,
 Յիսուսն , այն մարդը , Աստուծոյ ցուցուած ,
 Զօրութիւններով , հրաշքներով լեցուած ,
 Զանի առնելով փայտէն կախեցիք ,
 Եւ խաչ հանելով զայն սպաննեցիք :
 Աստուած զայն յարոյց , քանզի չէր հնար
 Որ Աստուածորդին գերեզման մնար :



Անոր յարութեան ամէնքս ենք վկայ
 Որ ձեր առջեւը դռնուինք ներկայ :

Աստուած զայն իր աջ կողմը նստեցուց ,
Ամէն անունէ զայն վեր բարձրացուց :
Յիսուս իր խոստումն ճշդիւ կատարեց ,
Եւ իր սուրբ Հոգին առ մեզ առաքեց .
Այն Յիսուսն , ձեզմէ չարաչար խաչեալ ,
Աստուած զայն ըրաւ Փրկիչ , Տէր , Օծեալ :

* * *

Զայս որ լսեցին սրտանց զըջացին ,
Այսպէս գոչեցին ձայնիւ լալադին : —
Մարդիկ եղբայրներ ըսէք , ի՞նչ ընենք ,
Որ մեր յանցանաղ թողութիւն գտնենք :
« Ապաշխարեցէք և մկրտուեցէք ,
Մեղաց թողութիւն իսկոյն կը գտնէք ,
Եւ Հոգւոյն Սրբոյ պարգեւն ընդունիք ,
Զի խոստումն ունիք դուք և ձեր որդիք » : —

Այս էր Պետրոսի տուած պատասխան ,
Անոնք որ սրտանց խօսքն ընդունեցան ,
Մկրտուեցան Առաքեալներէն
Եւ այն պատուական մեծ Պենտէկոստէն ,
Եղաւ Ծննդեան օրն եկեղեցւոյ ,
Ի քառս Յիսուսի և Հօր Աստուծոյ :

* * *

Երեք հազար անձ Քրիստոնեայ եղաւ
Սատանան մահուան հարուածն ստացաւ ,
Նոր եկեղեցին յարէր միաբան ,

Առաքեալներուն վարդապետութեան .
Հաց կը կըտրէին , Տեառն մահն յիշէին
Եւ աղօթից մէջ յարատեւէին ,
Իւրաքանչիւր զիւր ստացուածք ծախէր .
Ամէն բաներնին հասարակաց էր .
Հոգ կը տանէին հէգ կարօտելոց ,
Սատար լինէին այրեաց և որբոց
Միաբանութեամբ , ուրախութիւնով ,
ԶԱստուած կ'օրհնէին զուարթուն սրտով ,
Յաչա ամենեցուն շնորհ գտնէին
Եւ օր քան զօր ալ թուով կածէին :


3. ԿԱՂԻՆ ԲԺՇԿՈՒԻԼԸ

Պետրոս , Յովհաննէս իններորդ ժամուն ,
Տաճարն երթային , աղօթից պահուն .
Հոն տաճարին դուռն ինկած կը կենար
Ի ծննդենէ խեղճ կաղ մի անկար .
Սա ներս մտնողին ձեռքն երկնցունէր
Եւ ողորմութիւն պարգեւ կը խնդրէր :

* * *

Սրդ Առաքեալներն անոր կը նային ,
Եւ Պետրոս այսպէս կը խօսի կաղին . —

« Արծաթ և ոսկի ես չունիմ բնաւ ,
 Զոր ինչ մենք ունինք սա ձեզի է բաւ ,
 Յանուն Յիսուսի ելիր և կանգնէ ,
 Շարժէ անդամներդ . նն , քալէ , վազէ :



Կաղին աջ ձեռքէն բռնեց և վերցուց ,
 Եւ ոտից վրայ զնա կանգնեցուց :
 Կաղին ոտքերը արդ զօրանալով
 Սկսաւ քալել , վազել ցնծումով .
 Սնոնց հետ տաճարն մտաւ և օրհնեց
 Զանուն Աստուծոյ , որ զինք բժշկեց :
 Բոլոր ժողովուրդը երբոր զայս տեսաւ
 Մեծ զարմացումով լեցաւ յուզուեցաւ :

* * *

Պատեհութենէն օգուտ քաղելով
 Պետրոս քարոզեց Յիսուսն , սա կերպով . —

Խնչո՞ւ դուք ապշիք և կը զարմանաք ,
 Երբ այս կաղն բուժեալ հոս ներկայ տեսնաք .
 Մէ՞ք զօրութիւնով կարծէք թէ եղաւ
 Այս մեծ հրաշքը , Բէ՞ք ձեռքըն ըրաւ .
 Տէրն նորէն Որդին իւր փառաւորեց
 Անոր անունով այս հրաշք գործեց .
 Դուք զայն ուրացաք , նաեւ մատնեցիք ,
 Կենաց Առաջնորդն դուք սպաննեցիք ,
 Խնդրեցիք որ ձեզ տրուի Բարրաբան ,
 Այն այրն չարագործ և վատն մարդասպան .
 Բայց մեռելներէն Աստուած զայն յարոյց ,
 Բարձրացունելով աջ կողմն նստեցուց .
 Մենք բոլորս այսօր , որ հոս կեցած ենք
 Յարուցեալ Տիրոջ համար վկայենք
 Անոր զօրութեամբ կաղն բժշկեցաւ .
 Անոր անունով սա առողջացաւ .
 Արդ գիտեմ , եղբայրք , որ անգիտաբար ,
 Սպաննեցիք Տէրն , Սուրբըն և Արդար .
 Ուստի զղջացէք , և դարձի եկէք ,
 Մեղք ձեր ջնջուի , փրկութիւն գտնէք» ,

* * *

Հոս կեցաւ Պետրոս , չչարունակեց ,
 Քանզի իր քարոզն նախանձ ոխ գրգռեց :
 Վրան խուժեցին , զինք և իր ընկերն ,
 Զերբակալեցին հուժկու զինուորներն ,

Տաճարին մէջէն զայնս դուրս հանեցին
եւ անարգանօք դէպ ի բանտ տարին :



4. ԱՏԵԱՆԻՆ ԱՌՋԻՆ

Պետրոս Յովհաննէս երբ ի տաճարին ,
Յարուցեալ Յիսուսն կը քարոզէին ,
Սաղուկեցիներն , քահանայք , իշխան ,
Յուզեալ , բարկացած , անոնց վրայ հասան :
Խիստ դժուարեցան որ ժողովուրդին ,
Անոնք Յիսուսին վրայ խօսէին .
Ձեռք զարկին անոնց , կապեալ , կաշկանդեալ ,
Բանտը նետեցին մինչ օրն հետեւեալ :
Սակայն Աստուծոյ խօսքն յաղթանակեց ,
Շատ անզգայ սիրտ յուզեց եւ շարժեց .
Բազումք հաւտացին , Յիսուսի եկան ,
Հաւատացեալներն հինգ հազար եղան :
Հետեւեալ առտուն ժողով կազմեցին
իշխանք եւ դպիրք , ծերերն միասին ,
Քահանայապետ , Աննա , Կայափա ,
Եւ ասոնց ցեղէն բազումք են ներկայ :
Երկու բանտարկեալք ատեն հանուեցան
եւ ժողովին մէջ հարցաքննուեցան : —

« Ի՞նչ զօրութիւնով այդ հրաշքն ըրիք ,
Որո՞յ անունով կաղն բժշկեցիք » : —
Պետրոս , արդ , Հոգւով Սրբով լեցուեցաւ ,
Աներկիւղ , անվախ , պատասխան տուաւ . —
« Ով դուք իշխաններ Տեառն ժողովրդեան
եւ Իսրայելի ծերերըդ համայն .
Յայտնի ըլլայ ձեզ որ Նազովրեցի
Յիսուսի անուամբ այս հրաշք գործեցի .
Անոր անունով զոր դուք մերժեցիք ,
Խաչին խայտառակ մահին մատնեցիք .
Սակայն զայն Աստուած վերստին յարուց ,
Փառօք եւ պատուով աջ կողմն նստեցուց ,
Անոր զօրութեամբ կաղն բժշկուեցաւ ,
Անոր անունով հրաշքս գործուեցաւ :
Նա է ան քարը զոր անարգեցիք ,
Եւ նախատանօք մէկդի նետեցիք .
Սակայն նա եղաւ քար եւ վէժ անկեան ,
Վասն ժողովեան համայն մարդկութեան : »

* * *

Չոյգ մ'առաքելոց համարձակութիւն ,
Ժողովին վրայ բերաւ ապշութիւն .
Քանզի գիտէին որ տգէտ էին ,
Բայց Յիսուսի հետ միշտ պըտըտէին .
Անոնց քով կանգնած կաղը երբ տեսան ,
Նախանձով լեցան ու կատաղեցան .

Այլեւս չէր հնար հրաշքն ուրանալ ,
 Եւ Առաքելոց վրայ բռնանալ .
 Ուստի ատեանէն զանոնք հանեցին ,
 Եւ միմեանց հետ դաղտ խորհուրդ ըրին :
 « Ի՛նչ ընենք ասոնց » , միմեանց հարցունեն ,
 Զի երուսաղէմ հրաշքն լսեց արդէն .
 Եկէք , արգիլենք , խստիւ սպառնանք ,
 Յիսուսի անուն քարոզել չիտանք » : —
 Զայնս ատեան կանչեն և տան պատուիրան ,
 Ալ չքարոզել Սուրբ աւետարան .
 Պետրոս , Յովհաննէս պատասխանեցին . —
 Եթէ ուղիղ է Աստուծոյ առջին ,
 Որ անկէ էւել ձեզ մտիկ ընենք —
 Վճիռն դուք ատէք , դուք զայս դատեցէք :
 Զոր ինչ մենք տեսանք , զոր ինչ լսեցինք ,
 Անհնար է որ պատմելէ դադրինք » :
 Ժողովը նորէն խիստ սպառնացաւ ,
 Զայնս արձակելու որոշում տուաւ :

* * *

Առաքեալք փութով գացին եղբարց քով ,
 Պատմեցին բոլոր եղածը կարգով .
 Հաւատացեալներն ձայն բարձրացուցին ,
 Եւ Աստուծոյ այս աղօթքն մատուցին : —
 Դու ես Արարիչ երկնի և երկրին ,
 Ծովուն և անոր մէջը եղածին ,

Դու ես որ ըսիր , Դաւիթի բերնով . —
 Ինչո՞ւ հեթանոսք , ունայն խորհրդով ,
 Տէրը և Անոր Օծեալն կանարգեն :
 Թշնամանք Անոր դէմ հրատարակեն ,
 Այս սուրբ քաղաքիս մէջ հաւաքուեցան
 Յիրաւի Որդւոյն Յիսուսի վրան ,
 Նայէ , Տէր , անոնց խիստ սպառնալեաց ,
 Համարձակութիւն տուր մեզ , տկարաց ,
 Որ խօսքդ քարոզենք , գործենք հրաշքներ ,
 Կորուսեալն փրկենք բուժենք հիւանդներն » :

* * *

Երբ անոնք այսպէս դեռ կաղօթէին ,
 Տունը շարժեցաւ , ուր նստած էին ,
 Ամէնքը նորէն Հոգւով լեցուեցան ,
 Համարձակութեամբ խօսքը խօսեցան :
 Իսկ հաւատացեալք մէկ սիրտ մէկ հոգի ,
 Զիրար խնամեն սիրով կենդանի :
 Անոնց մէջ չկար կարօտ և թշուառ ,
 Մին միւսին էր օգնական սատար ,
 Շնորհքով կաճէին և զարգանային ,
 Դրախտին դուռն փակեալ՝ բացուած էր կրկին :

— ❧ —

5. ԱՌԱՋԻՆ ՍՏԱԽՕՍՔ

Հաւատացելոյ այս ընտիր խումբին ,
Սատանան նայէր աչօք մութգին ,
Շուտ յաջողեցաւ որոմը ցանեւ ,
Վախով սարսափով սրտերն լեցունեւ :

* * *

Եկեղեցւոյ մէջ մի այլ Անանիա ,
Իւր կնոջը հետ , անուն Սաբիրա ,
Կը միաբանին ագարակ ծախեւ ,
Եւ անոր գինէն մաս մը վար դնեւ :
— Ով Անանիա , Պետրոս հարցունէ ,
Ագարակին գինն միայն այսօր է .
— Այո , լոկ այսքան , ըսէ Անանիա .
Յայնժամ Առաքեալն այսպէս կ'որոտայ .
— Ինչո՞ւ սատանան քու սիրտը լեցուց ,
Որ Սուրբ Հոգւոյն դէմ ըլլաս սուտ զրոյց .
Քուկդ էր ագարակը և աղատ էիր ,
Որ ուզածիդ պէս նուէրդ որոշէիր .
Ձէ թէ հարցոյ մէջ դու սուտ խօսեցար ,
Այլ Աստուծոյ դէմ յանցաւոր եղար :
Երբ Անանիա այս խօսքերն լսեց ,
Գետինը ինկաւ և հոգին փչեց :

Ահ ու դող եկաւ ամէնուն վրան ,
Եւ երիտասարդք իսկոյն ներս մտան .
Անկենդան մարմինն , նախ պատանգեցին ,
Եւ դուրս հանելով զանի թաղեցին :


* * *

Երեք ժամ չանցած կինը ներս մտնէ ,
Առանց գիտնալու թէ ինչ եղած է .
Պետրոս հարցունէ , — Սաբիրա իրա՞ւ
Ագարակն այսքան գինով ծախուեցաւ :
— Իրաւ որ այնքան , ըսէ Սաբիրա :
Դարձեալ Առաքեալն իր ձայնը բառնայ .
— Ի՞նչ է այդ որ դուք միաբանեցար ,
Տէրոջը Հոգին փորձել խորհեցար .
Անոնք որ քու այլդ թաղեցին արդէն ,
Անկենդան մարմինդ դուրս պիտի հանեն » :
Իսկոյն Սաբիրա գետինը կ'իյնայ ,
Պետրոսի ոտից քով հոգին կուտայ :
Եւ երիտասարդք նորէն ներս մտնան ,
Դարձեալ կատարեն տխուր գործն թաղման :
Բոլոր լսողներն վախով ու դողով
Լեցուեցան նաեւ ահով , երկիւղով :

* * *

Ո՞հ թէ նաեւ մենք սուտէն երկնչինք ,
Միշտ ճշմարտութիւն խօսիլ վարժուինք

« Այոն մեր այ՛, իսկ ոչն մեր ոչ » .
Այս է լոկ պատուէրն մեր Օրհնեալ Տէրոջ :



6. ԳԱՄԱՂԻԷԼ

Առաքելոց դարն « հրաշից ժամանակ » :
Ժողովուրդն աճէր միշտ և շարունակ .
Վերնատուն փոքր գայ , սրահն Սողոմոնի ,
Միաբանութեան տեղին կը լինի :
Հիւանդներն բերեն դնեն հրապարակ ,
Կարգ կարգ մահիճներ , շարք շարք պատգարակ .
Սպասեն որ երբ Պետրոս այն տող գայ ,
Գոնէ անոր շուքն իյնայ անոնց վրայ .
Բոլոր չրջակայ տեղերէն կուգան ,
Դէպ' երուսաղէմ վասն բժշկութեան :

* * *

Սաղուկեցիներն և քահանաներ ,
Առաքելոց դէմ խորհին հնարքներ .
Նախանձով անոնց սրտերնին լեցուած .
Ատելութիւնով աչքերնին կուրցած ,
Վերստին զանոնք կը ձերբակալեն ,
Եւ հասարակաց բանտը կը նետեն :

Բայց Տեառն հրեշտակը գիշերանց կուգայ ,
Եւ բանտին դռներն նորէն կը բանայ ,
Բանտարկեալները ազատ կարձակէ ,
Կենաց խօսքերը խօսիլ հրամայէ :



Բոլոր ծերերը առտուն ժողովին ,
Բանտարկեալները պէտք է որ բերուն .
Ոստիկանք կերթան , պարապ կը դառնան ,
Կըսեն թէ բանտին մէջ մարդ չգտան :
Ջարմանքը պատեց բոլոր ժողովը ,
Խնչ պիտի ըլլայ կըսեն այս բանը .
Յայնժամ մէկն կուգայ , շնչառպառ վազէ ,
Բանտարկեալներէն լուր մը կը բերէ .
— Տաճարն են կանգնած , խօսք կը քարոզեն ,
Բոլոր ժողովուրդ անոնց կ'ունկնդրեն :

Իշխանը կերթայ ոստիկաններով,
Կը բերէ զանոնք քաղցրը խօսքերով .

* * *

Արդ առաքեալներն ատեանը կանգնին ,
Եւ նորէն խօսիւ կը հարցաքննուին :

« Զեզի չըսի՞նք որ ալ չքարոզէք ,
Այն մարդուն արիւնն մեր վրայ բերէք » :
— « Առաւել պէտք է , ըսաւ Առաքեալ ,
Տէրոջ քան մարդկանց հնազանդ ըլլալ :
Յիսուսը յարոյց մեր Հայրը Աստուած ,
Զոր դուք կախեցիք փայտէ մը կախած ,
Նա է առաջնորդ համայն մարդկութեան ,
Ապաշխարութեան մեղաց , թողութեան ,
Վկայ ենք ամէնքս , նաեւ Սուրբ Հոգին ,
Փառօք յարութեան օծեալ Յիսուսին » :

* * *


Ժողովքը կը յուզի կատաղի առաւել ,
Առաքեալները կուզեն սպաննել .
Բայց Գամաղիէլ այր Փարիսեցի ,
Բարի և ուսեալ , խոհեմ , խելացի ,
Կը հրամայէ իրենց ատեանէն
Առաքեալները քիչ մը դուրս հանեն ,
« Իսրայէլացիք , ըսէ Գամաղիէլ ,
Խնդրեմ մի վայրկեան ինձ մօտիկ ընել .

Այս մարդկանց համար շատ զգոյշ եղէք ,
Զըլլայ որ յուզմամբ սխալ քայլ առնէք ,
Գիտէք որ Թեւդաս մեզ քիչ չ'վախցուց ,
Երբ չորս հարիւր մարդ իրեն միացուց .
Ինք սպաննուեցաւ , բոլորն ցրուեցան ,
Անոնց նպատակք ի դերեւ ելան :
Անոր յաջորդեց Յուդա անունով ,
Մի Գալիլիացի մեծ խոստումներով .
Նա բազում մարդկանց սրտեր շահեցաւ ,
Նոքա ցրուեցան , ինք կորսուեցաւ :
Ուստի թողէք դուք այս Առաքեալներն ,
Եթէ մարդկային են անոնց ջանքերն ,
Հնարը չկայ շուտ պիտի քակուին ,
Բայց եթէ անոնք են Աստուածային ,
Անհնար է ձեզ անոնց գործն աւրել ,
Հնա՞ր է Աստուծոյ դէմ կռուի ելլել » :

* * *

Գամաղիէլի յորդորն իմաստուն ,
Շատ ընդունելի եղաւ ամենուն ,
Առաքեալները ատեան կոչուեցան ,
Եւ հոն նախ լաւ մը գանակոծուեցան .
Ապա խիստ կերպով ալ պատուիրեցին ,
Յիսուսի անուամբ այլեւս չխօսին :
Իսկ Առաքեալներն ուրախանալով ,
Ատեանէն ելան գացին եղբարց քով .

Յնծացին, քանզի արժանի եղան,
Բանտի և ծեծի վասն Փրկչին անուան,
Զէին դադարեր տաճարն և տուներն,
Քարոզել Յիսուան և կենաց խօսքերն:




7. ԵՕԹՆ ՍԱՐԿԱՒԱԳՆԵՐՆ

Հաւատացելոց թիւն ստուարանար,
Եւ Առաքելոց անհնար կըլլար,
Որ խօսքն քարոզեն և միանգամայն
Որքոց և այրեաց պէտքերը հոգան:
Ուստի եղբայրներն մէկտեղ ժողուեցին
Բացարձակ կերպով յայտարարեցին,
Թէ Աստուծոյ խօսքը չեն կրնար ձգել
Ու սեղաններուն երթալ ծառայել:
Ուստի եղբայրներ, ըսին, ընտրեցէք,
Եօթը հոգիներ ձեզմէ զատեցէք,
Որք պէտք է ըլլան բարի վկայուած,
Իմաստութիւնով, Հոգիով լեցուած,
Զանոնք այս գործիս վրայ պիտի դնենք,
Իսկ մենք աղօթենք և խօսքն քարոզենք:
Բոլոր ժողովին հաճոյ թուեցաւ,
Ընտրութեան գործին ձեռնարկուեցաւ:

* * *

Արդ ընտրուեցան եօթըն եղբայրներ,
Որոնց գլխաւորն Ստեփաննոսն էր.
Սա էր այր բարի և հաւատացեալ,
Եւ Սուրբ Հոգիով օժտեալ և լցեալ:
Ասոնք կանգնեցան ժողովին առջին,
Առաքեալք անոնց վրայ ձեռք դրին:
Այսպէս Աստուծոյ խօսքը զօրանար,
Հաւատացելոց բազմութիւն շատնար,
Քահանաներէն ալ մեծ բազմութիւն
Ընէին Փրկչին հնազանդութիւն:



8. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅ

Նորէն սատանան բոլոր ոյժն ժողուեց,
Հաւատացեալներն նեղել որոշեց.
Ստեփաննոսի գործած հրաշքներ,
Կը գրաւէին հանրութեան սրտեր:

* * *

Ընդդէմադէմն ընկերներ գտան,
Ստեփաննոսի հետ վէճի ելան.
Երկսայրի սուրովն կենաց պատգամին,
Զանոնք ամօթով տապալեց դետին.


Ուստի հրապուրեն քանի մը մարդիկ ,
Ստեփաննոսի դէմ նիւթեն չարիք .
— Լսեցինք , ըսին , հայհոյութիւններ ,
Որ նա Մովսէսի և Տեառն դէմ խօսէր .
Ծերերն , դպիրներն ևս գրգռեցին ,
Ջանի բռնեցին և ատեան տարին :
Շատ մը սուտ վկայք նաեւ հոն եկան ,
Ըսին , սա խօսի բանք հայհոյական ,
Թէ այս սուրբ տեղին դէմ , թէ օրէնքին ,
Ըսելով թէ այն Մեծն Նազովրեցին
Տաճարը պիտի ի հիմանց քանդէ
Նաեւ Մովսէսի օրէնքներն փոխէ :
Ատեանն նստողներն անոր նայեցան ,
Եւ անոր դէմքն էր հրեշտականման :

9. ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹԻՒՆ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ

Ատեանը իսկոյն գործի սկսաւ ,
Քահանայապետն , — իրաւ է , ըսաւ ,
« Իրաւ է , զոր ինչ քեզ դէմ վկայեն ,
« Իրաւցունէ այդ բաներն ատանկ են : »

* * *

Արդ Ստեփաննոս լցեալ Սուրբ Հոգւով
Բերանը բացաւ ըսաւ եռանդով . —



Մարդիկ , եղբայրներ , հայրեր սիրելիք ,
Կ'ազաչեմ ձեզի ինձ ըրէք մտիկ :
Հայրն մեր Աբրահամ Տէրջ հաւատաց ,
Իր առջեւ լուսոյ նշոյլն չ'տեսած ,
Ելաւ իր երկրէն , յօժարութիւնով ,
Աստուծոյ ձայնին հնազանդելով :
Որդին Իսահակ յութերորդ օրուան ,
Ընդունեց ուխտին նշանն թրփատման :
Յակոբ ունեցաւ տասներկու սրդի ,
Որոնց նահապետ անունն կը տրուի ,
Ասոնք Յովսեփին կը նախանձէին ,
Եւ զայն Եգիպտոս գերի ծախեցին .


Աստուած իր հետն էր և զանի փրկեց ,
Նեղութիւններէն զանի ազատեց ,
Եւ տուաւ անոր մեծ իմաստութիւն ,



Եգիպտոս երկրին վրայ իշխանութիւն :
Քանանու վրայ եկաւ սով սաստիկ ,
Մեր հայրերն չէին գտներ ուտելիք .
Յովսէփայ եղբարք Եգիպտոս եկան ,
Եւ իրենց համար ցորեն ստացան .
Երկրորդ գալստեան Յովսէփ զինք ճանչցուց ,
Եւ Փարաւոնին զայնա ներկայացուց .
Յակոբ Եգիպտոս իջաւ և մեռաւ ,

Սիւքէմ տարուելով փառօք Թաղուեցաւ :
Յակոբայ սերունդն կ'աճէր , զարդանար ,
Նոր մի Փարաւոն Յովսէփն չէր ճանչնար ,
Ուստի չարչարեց սերունդն Յակոբայ ,
Զնջել որոշեց զանոնք անխնայ :
Սրդ Մովսէս ծնաւ , մանուկ գեղեցիկ ,
Երեք ամիս զայն պահեց իւր մայրիկ .
Յետոյ Նեղոս գետն նետեց , ստիպեալ ,
Դուստր Փարաւոնի զայն հանեց դարձեալ :
Զանի որդեգրեց , կրթեց խնամով ,
Զօրաւոր եղաւ խօսքով և գործքով :
Նա երբոր եղաւ քառսուն տարեկան ,
Դընաց իր եղբարց քով այցելութեան .
Ի մօրենիին արդ երեւցաւ Տէր ,
Որ կ'այլէր Թէեւ բայց չէր սպառեր .
Տէրը զինք կանչեց , Եգիպտոս խրկեց ,
Եւ Իսրայելի առաջնորդ կարգեց .
Իսրայէլն հանեց Նա Եգիպտոսէն ,
Եւ անցուց հրաշքով զայն Կարմիր ծովէն .
Քառասուն տարի գործեց հրաշքներ ,
Անապատին մէջ բազում նշաններ :
Մովսէս ցոյց տուաւ մարգարէաբար ,
Թէ իրեն նման մէկը պիտի գար .
Սա էր Մարգարէն , Փրկիչն աշխարհին .
Ազգք համայն Անոր պիտի հետեւին :
Սինա լեռան վրայ օրէնքն էր տրուած ,

Սակայն Մովսէս դեռ լեռնէն վար չիջած ,
Ահարոն շինեց անոնց աստուածներ ,
Ժողովուրդն անոնց զոհ մատուցանէր :
Այո՛ , մեր հայրերն թողին եհովան ,
Պաշտեցին Մողորն , Բահաղն և Հռեմփան .
Տապանակ ուխտին Յեսուայ միջոցով ,
Քանան բերուեցաւ շքեղ թափօրով .



Որոշեց Դաւիթ շինել մի տաճար ,
Բայց Աստուած գտաւ զնա անյարմար .
Սողոմոնի էր այս վերապահեալ ,
Թէև չբնակիր Տէր Աստուածն բարձրեալ ,
Ձեռագործ տան մէջ , շքեղ , փառաւոր ,
Զի երկինք համայն աթոռն է անոր ,

Եւ բոլոր երկիր ոտքին պատուանդան ,
Նա կը բնակի Ե խոնարհ մարդկան » :

* * *

Հոս Ստեփաննոս դարձաւ ունկնդրաց ,
Եւ տուաւ անոնց ջախջախիչ հարուած . —
Անթլփատ սրտով Իսրայելացիք ,
Դուք ձեր հայրերուն միշտ կը նմանիք .
Խստապարանոց էք դուք շարունակ ,
Հոգւոյն Սրբոյ դէմ կենաք հակառակ .
Մարգարէներէն զո՞րն չոպաննեցին
Ձեր հայրերն , զո՞րը չհալածեցին ,
Որք այն Արդարը , զոր դուք ուրացաք ,
Եւ Անոր մատնիչն , սպաննիչն եղաք .
Անոնք միասին մատով ցոյց տուին ,
Անոր գարուստը մեզ աւետեցին .
Հրեշտակաց ձեռքով օրէնքը առիք ,
Սակայն ձեր ոտից զայն կոխան ըրիք : —

* * *

Ալ չեն համբերեր , զի չափը անցուց ,
Բոլոր ամբոխը սաստիկ կատղեցուց .
Կատղած , զայրացած գաղանի նման ,
Իրենց աւուաներն անոր ցոյց կուտան .
Իսկ Ստեփաննոս Սուրբ Հոգւով լցեալ ,
Երկինք կը նայի . Ի՞նչ տեսիլք օրհնեալ —

Տեսնէ Աստուծոյ փառքն անճառելի ,
 Յիսուսն որ Հօրը աջ կողմը կանգնի .
 — Ահա կը տեսնեմ , գոչէ , յաղթական ,
 Բացուած են երկնից դուռն ու պատուհան .
 Եւ փառաւորեալ Տէրն , Որդին Մարդոյ ,
 Կանգնած է պատրաստ աջ կողմն Աստուծոյ : —
 Դոցեն ականջնին , աղաղակ բառնան ,
 Վայրի դադանի պէս գոչեն , գոռան .
 Վրան կը վազեն բոլորը մէկէն ,
 Քաշեն , քաշքշեն , քաղքէն դուրս հանեն .
 Իւրաքանչիւր ձեռք հաւաքէ քարեր ,
 Սօղոսի յանձնեն իրենց հանդերձներ ,
 Որ կարող ըլլան ազատ , անարգել ,
 Սուրբն Ստեփաննոսն զիւրաւ քարկոծել .
 Քարերը տեղան կարկուտի նման ,
 Նախափկային մարմնոյն , գլխուն վրան .
 Նա աղօթք կրնէ գոչէ դէպ յերկինս . —
 « Ով Տէր իմ Յիսուս , ընդունէ հոգիս .
 Ծնկան վրայ դարով բարձրաձայն կոչէր , —
 Տէր իմ , առ մեղքը ատոնց մի սեպեր : »
 Կըսէ զայս , ննջէ քրնով արդարոց ,
 Իսկոյն ընդունուի ի գունդըս սրբոց :



10. ՍԻՄՈՆ ՄՈԳ

Ստեփաննոսին մարմինն վերցուցին ,
 Մեծ ողբ ընելէ յետոյ թաղեցին .
 Հաւատացեալներն ցիրուցան եղան ,
 Բոլոր Սամարիա և Հրէաստան :
 Քանզի այն օրեր հալածանք ելաւ ,
 Եւ եկեղեցին տակն ու վրայ եղաւ .
 Յիրուցան եղողք ուր որ երթային ,
 Աստուծոյ խօսքը կը քարոզէին .
 Սարկաւագներէն մին ևս , Փիլիպպոս ,
 Արձակ , համարձակ քարոզէր Քրիստոս .
 Անդամալոյծներն , կաղերն բժշկէր .
 Դիւահարներէն հանէր ոգիներ :

* * *

Ի Սամարիա Սիմոն անունով ,
 Մարդ մը բնակէր մագի պաշտօնով .
 Կը զարմացունէր ազգն Սամարացոց ,
 Մեծ պատիւ ունէր յաչս բոլոր մարդոց .
 Ամէնքն կոչէին իր կախարդութիւն ,
 Բարձրեալն Աստուծոյն հզօր զօրութիւն .
 Հոն ալ շատերը հաւատքի եկան ,
 Եւ Փիլիպպոսէն մկրտուեցան .

Սիմոն մոգն ինքն ալ, կեղծ մի հաւատքով,
Մկրտուեցաւ, բայց միայն ջուրով:
Առաքեալները երբոր լսեցին,
Յաղթանակն բանին Բրիտոս Յիսուսին՝
Պետրոսն, Յովհաննէսն, ուրախութիւնով,
Օգնութեան խրկեն Սամարիա փութով:
Ասոնք հասնելով աղօթք մատուցին,
Եւ ձեռք դնելով Սուրբ Հոգին տուին:


* * *

Ասի Սիմոնին աչքը շաղկապ,
Առաքեալներուն շատ ստակ մատուց.
Եւ խնդրեց իրեն տալ իշխանութիւն,
Զեռքեր դնելով տալ պարգեւն Սուրբ Հոգւոյն:
Բայց Պետրոս ըսաւ. — «Արժաթք քեզի
Հետ ի միասին խաղաւ կորստի.
Աստուծոյ պարգեւն միթէ դուն կարծե՞ս
Որ քու դրամովք դու ծախսու առնես.
Դու այս բանիս մէջ չունիս մաս բաժին,
Զի սիրտդ շիտակ չէ Աստուծոյ առջին,
Ուստի այդ քուկին գարշելի մեղքէդ,
Զեղջի եկ այդ քու մեծ չարութենէդ.
Ի բոլոր սրտէ Աստուծմէ խնդրէ,
Որ քու չար սրտիդ խորհուրդը ներէ.
Զքեզ կը տեսնեմ մաղձի դառնութեամբ,
Կապեալ, կաշկանդեալ անիրաւութեամբ:» —

Սիմոն խնդրեց որ Աստուծոյ ազաչեն,
Տեառն բարկութենէն զինքը ազատեն:

* * *

Սիմոնի նման ո՞հ քանիներ կան,
Որք կեղծ հաւատքով հօտին միացան.
Դուրսէն ոչխարի հանդերձ կը կրեն,
Ներսէն փարատող, վայրի գայլեր են:



11. ԵԹՈՎՊԱՅԻ ՆԵՐՔԻՆԻՆ

Պետրոս, Յովհաննէս արդ վերադառնան,
Ճամբան քարոզեն Սուրբ Աւետարան.
Տէրոջը հրեշտակն ալ Փիլիպպոսին,
Հրամայէ երթալ կողմն հարաւային:

* * *

Տէրոջ տաճարէն երուսաղեմայ,
Այլն եթովպացի կը վերադառնայ.
Նա էր Կանդակա մեծ թագուհին
Ասպետն, գանձապահն նաեւ ներքինին.
Իր կառքը նստած առանձին կարդար,
Եսայեայ գրքէն, բայց չէր հասկնար.

Հոգին Սուրբ ըսաւ արդ Փիլիպպոսին, —
 Գնա՛, մօտեցիր այդ անցնող կառքին :
 Փիլիպպոս շուտով կառքին մօտեցաւ ,
 եւ ուշադրութեամբ ալ ականջ դրաւ :
 « Արդեօք կարգացածդ կը հասկնամք դու , » —
 Հարցուց Փիլիպպոս , ձայնիւ մի ազդու .
 Ներքինին ըսաւ , « Ի՞նչպէս հասկնամ ,
 եթէ զայն մեկնող մէկը չունենամ : »
 Ներքինին զանի իր կառքն հրաւիրեց ,
 եւ իր քովն նստիլ անոր աղաչեց .
 Եսայեայ այն մասն որ արդ ներքինին ,
 ճամբորդած ատեն կարդար առանձին ,
 Այս էր , « Ոչխարի պէս մօլթուեցաւ ,
 Սակայն գառի պէս բերանը չբացաւ .
 Ի խոնարհութեան վերցաւ դատաստան ,
 Ո՞վ կարէ պատմել թիւն իւր սերնդեան .
 Անոր կեանք երկրէ , ո՛հ , կը վերցուի ,
 Վշտաց Տէր , ցաւոց տեղեակ կը լինի : »
 Ներքինին հարցուց արդ Փիլիպպոսին , —
 « Որո՞յ համար է բանն մարգարէին : »
 Փիլիպպոս յայնժամ առիթ համարեց ,
 եւ զՏէր Յիսուս անոր քարոզեց .
 Կառքը գետի մը քով երբոր հասաւ ,
 Ներքինին — « Ահա ջուր պատրաստ » — ըսաւ ,
 « Ի՞նչ բան կարգիլէ զիս մկրտուելէ ,
 « Տէր Յիսուս Քրիստոսն այժմ դաւանելէ : »

Փիլիպպոս ըսաւ , — « Եթէ հաւատաս
 Քու բոլոր սրտովդ , մկրտուիլ կրնաս : —
 « Տէր Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդին ,
 Սրտանց կընդունիմ » ըսաւ ներքինին :
 Կառքը կայնեցաւ գետն իջան շուտով ,
 եւ մկրտուեցաւ ներքինին ջրով .
 Մեծ ուրախութեամբ գնաց ներքինին ,
 Պատմեց զամէնը իր թագուհիին .
 Փիլիպպոս իսկոյն յափշտակուեցաւ ,
 Հոգիէն , և այլ մի տեղ տարուեցաւ :



12. ՍՕՂՈՍ ԿԸԼԼԱՅ ՊՕՂՈՍ

Կամակիցն մահուան Ստեփաննոսին ,
 Հալածիչն հղաւ եկեղեցիին .
 Առաքելոց դէմ նա մահ կը փչէր ,
 Անոնց դէմ բազում չարիք կը նիւթէր .
 Քահանայապետն անոր թուղթեր տալ ,
 Որ հաւատացեալք , ուր որ ալ գտնայ ,
 Թէ ըլլայ նա մարդ և կամ թէ կնիկ ,
 Անոնց հաղորդէ ամէն կերպ չարիք :
 Կապէ զայնս , դնէ վիզերնին շղթայ ,
 Յանձնէ ատենանին երուսաղիմայ :

Այսպէս պարտաւոր Դամասկոս երթար ,
Սակայն երբ քաղքին նա կը մօտենար ,
Յանկարծ մի մեծ լոյս շուրջն փայլատակեց ,
Գետինը ինկած՝ սա ձայնը լսեց . —



Սաւուղ , Սաւուղ , զիս ինչո՞ւ հալածես ,
Խթանին դէմ դու ի զուր աքացես » :
Դողալով Սաւուղ , մեծ ապշութիւնով ,
— Տէր ի՞նչ կուզես որ ընեմ — գոչելով
Կը պատասխանէ , անկեալ ի գետին ,
Ահով , սարսափով անծանօթ անձին :
— Ելի՛ր , քաղաքը մտիր և քեզի
Ինչ ընելիքդ հոն պիտի ըսուի : —
Սօղոս ոտք ելաւ , աչք չէին տեսներ ,
Ապշած սարսափած անոր ընկերներ
Անոր ձեռքերէն բռնեցին , տարին ,

Եւ Դամասկոսի դռնէն մտցուցին .
Երեք օր ամբողջ Սաւուղ կոյր մնաց ,
Ոչ հաց էր կերած և ոչ ջուր խմած :
Անդ ի Դամասկոս Տէրն ի տեսիլքի ,
Անանիա անուն մէկուն կը խօսի —
Ելիր և գնա՛ ողիղ փողոցը ,
Յուդայի տան մէջ հարցուր Սօղոսը .
Ահա անիկայ ձեռքերն տարածած ,
Ճիշդ այս ժամուս է աղօթքի կանգնած » :
— Տէր , լսեցի որ — ըսաւ Անանիա —
Սրբոցդ շատ չարիք կընէ անիկայ .
Եւ հիմայ ալ նա ճիշդ հոս է եկած ,
Որ հետքն իսկ ջնջէ անունդ կանչողաց . —
« Գնա՛ , ըսէ Տէրն , առանց վարանման ,
Նա է ինձ համար մի ընկեր աննման .
Անունըս տանիլ մեծ թագաւորաց ,
Իսրայելացւոց և հեթանոսաց :
Պիտի ցուցունեմ թէ վասն իմ անուան
Պիտի մատնուի նա շատ նեղութեան » :

* * *

Անանիա գնաց , այն տունը մտաւ ,
Ձեռքը Սօղոսի ուսին վրայ դրաւ .
— Ո՛վ եղբայր Սաւուղ — ըսաւ — զիս խրկեց
Յիսուսն , որ ճամբան քեզի այցելեց ,
Պիտի ստանաւ աչացդ տեսութիւն ,

Նաեւ ընդունիս պարգեւն Սուրբ Հոգւոյն :
 Իսկոյն աչքերէն , թեփերու նման
 Բաներ թափելով , աչքերն բացուեցան .
 Ելաւ և իսկոյն մկրտուեցաւ ,
 Կերակուր կերաւ , ոյժն վրան եկաւ .
 Հաւատացելոց հետ կը կենակցէր ,
 Անոնցմէ բնաւ զատուիլ չէր ուզեր :
 Ժողովարանաց մէջ ժողովուրդին ,
 Քարոզէր Յիսուսն Աստուծոյ Որդին .
 Բոլոր լսողներն զարմանք էր պատեր ,
 Ըսէին — Այս չէ՞ որ կը հալածէր :
 Հրէայք ալ սաստիկ նախանձով լեցան
 Խորհուրդ կընէին անոր սպանման .
 Գիշեր և ցերեկ տուններն սպասեն
 Որ Սօղոսն իրենց ձեռքէն չփախցնեն .
 Սօղոս իմացաւ անոնց նենգութիւն
 Աչակերտք ըրին արդ պատրաստութիւն .
 Զամբիւղ մը առին զայն մէջը դրին
 Եւ գիշերն պատէն վար իջեցուցին .
 Սօղոս փախչելով սուրբ քաղաք հասաւ ,
 Աչակերտաց քով տպաստանեցաւ .
 Սակայն ամէնքն ալ շատ կը վախճային
 Անկեղծ ըլլալուն տարակուսէին .
 Սակայն Բառնաբաս զանիկայ առաւ
 Եւ ի միասին եղբարց քով տարաւ .
 Եւ պատմեց անոնց մանրամասնաբար

Ինչպէս Տէրն գաւառ ոչխարն իւր մօլար .
 Սօղոս համարձակ Յիսուսն քարոզէր
 Հեղինացելոց հետ իսկ կը վիճէր :
 Ասոնք կը խորհին զանի սպաննել ,
 Եղբարք կորոյնն զնա փախցունել .
 Արտորնօք զանի Կեսարիա խրկեն
 Եւ անկէ Տարոն իւր քաղաքն հասցնեն :

* * *

Անցաւ փոթորիկն ալեկոծութիւն
 Տիրեց ամէն տեղ սէր խաղաղութիւն .
 Թէ ի Հրէաստան թէ ի Գալիլիա
 Մինչև իսկ նաև ի Սամարիա .
 Եւ եկեղեցիք Տէրոջ երկիւղով
 Եւ Հոգւոյն Սրբոյ լուսովն քալելով
 Կը զարդանային յառաջանային
 Ազգեցութեամբ և թուով աճէին :



13. ԵՆԷԱՍ ԵՒ ԱՅՄԵՄՆԻԿ

Պետրոսի գործն էր շրջիլ քարոզել
 Սուրբերն հաստատել և մխիթարել :
 Օր մը Լիւդդայի սուրբերն այցելեց
 Հոն Ենէաս անուն մարդ մը բժշկեց .

Նա ութը տարի մահիճն էր պառկած
Անդամալոյժ և ուժասպառ եղած .
— Ե՛լ — գոչեց Պետրոս — անկողինդ շտկէ ,
Տէր Յիսուս Գրիստոս քեզ կը բժշկէ » :
Նա իսկոյն ելաւ բժշկուեցաւ ,
Ուրախութիւնով Տէրոջ փառք տուաւ :
Լիւդդա և Սարօն հրաշքը տեսն
Եւ հաւատալով Տէրոջը դարձան :

* * *

Յոպպէի մէջ մի աշակերտուհի
Տաբիթա որ ևս Այծեմնիկ կոչուի .
Լեցուած էր բազում բարի գործքերով
Գթութեան գործքով ողորմութիւնով :
Նա հիւանդացաւ մեռաւ , լուացին
Եւ ապա վերին սենեակ մը դրին .
Յետոյ Պետրոսին լուր խրկուեցաւ
Եւ Լիւդդայէն շուտ Յոպպէ բերուեցաւ :
Վերին սենեակը հանեցին զանի
Այրիները կանգնած անդ շուրջանակի
Յոյց տան մեռեալին կարած բաճկոններն
Եւ անոր շինած բազում հանդերձներն .
Պետրոս նախ զամէնն սենեակէն հանեց
Ինք մեռեալին քով կեցաւ ծնրադրեց .
Ապա աղօթեց և ձայնիւ ուժգին՝
— Տաբիթա՛ ելի՛ր — գոչեց մեռեալին :

Մեռեալը իսկոյն աչքերն բանալով ,
Շիտակ նստեցաւ Պետրոսն տեսնելով .
Սա ալ իր ձեռքը անոր երկնցուց
Եւ ողջ ու առողջ ոտից վրայ կեցուց :
Ապա կոչելով որբ և այրիներն
Լացող ողբացող հաւաքեալ սուրբերն .
Ողջ ողջ Այծեմնիկն ցուցուց ամենուն
Եւ զընաց Սիմոն կաշեգործին տուն .
Յոպպէի մէջ հրաշքն շուտ տարածուեցաւ
Նորէն Տէր Յիսուս փառաւորեցաւ .
Շատերն հրաշքէն յոյժ ազդուեցան
Եւ Տէր Յիսուսին հպատակեցան :



14. ԿՈՒՌՆԵԼԻՈՍ

Կեսարիոյ մէջ կար ծանօթ ամենուն
Մի հարիւրապետ Կուռնելիոս անուն .
Ինք և իր տունը բարեպաշտ էին
Եւ շատ ողորմած Հրէից ազգին .
Աստուածավախ էր նաև մարդասէր
Եւ աղօթից մէջ կը յարատեւէր :
Իններորդ ժամուն սա ի տեսիլքի
Տեսաւ Աստուծոյ հրեշտակն յայտնի

Որ իր քով եկաւ և իրեն ըսաւ —
Ո՛վ Կուռնեղիոս աղօթքդ լսուեցաւ .
Քաջ լեր , ինչու որ Աստուծոյ առջին
Քուռ ողորմութիւնքդ բոլորն կը յիշուին .
Մարդ խրկէ Յոպպէ և Պետրոսն կանչէ ,
Սիմոն կաշեգործն զայն հիւրընկալէ :

* * *

Հրեշտակն մեկնեցաւ . նա տայ հրաման
Խրկել ծառաներ և մի ոստիկան :
Անոնք յաջորդ օրն քաղաքն չհասած
Պետրոս ժամ վեցին տանիքն էր ելած .
Նա հոն կաղօթէր , էր խիստ անօթի ,
Զի մօտ էր ատեն ժամանակն ճաշի :
Մինչ կ'ըլլար ճաշի դեռ պատրաստութիւն ,
Մտացն վրայ եկաւ յափշտակութիւն ,
Տեսաւ երկինքը լայնարձակ բացուած ,
Եւ չորս ծայրերէն կտաւ մը կապուած .
Սա իջաւ յերկիր և մէջն էր լեցուն
Անասուն , գազան , թռչուն և սողուն :
Ականջին ազդու մի ձայն կը հնչէր —
— Ելի՛ր , ո՛վ Պետրոս , ել , մօրթէ ու կեր ,
Բայց Պետրոս ըսաւ . — Քա՛ւ լիցի , Տէր իմ .
Ես պիղծ , անմաքուր բանէն կը գարշիմ ,
Երկնային մի ձայն վերստին եկաւ . —
— Աստուծոյ մաքրածն պիղծ մի կոչեր բնաւ

Այս երրորդ անգամ ունեցաւ տեղի ,
Ամանը դարձեալ երկինք վերցուի :
Պետրոս զարմանօք , ապշած կը խորհէր ,
Թէ այս տեսիլքը ինչ նշանակէր .
Եւ ահա երեք մարդիկը հասան ,
Սիմոնին տունը հարցնելով գտան ,
Հոգին ալ ըսաւ Պետրոսին , ահա
Քեզ կը փնտրուեն , անոնց հետ գնա՛ ,
Զըլլայ որ խիղճըդ յուզի , վրդովի
Վստահ եղի՛ր , ես զանոնք խրկեցի :


* * *

Հետեւեալ օրը անոնց հետ գնաց ,
Մի քանի եղբարց հետ ընկերացած ,
Ի կեսարիա յաջորդ օրն մտան ,
Կուռնեղիոս ալ կ'սպասէր ի տան .
Ժողուած մտերիմ իւր բարեկամներ ,
Եւ դրացիներ ու ազգականներ :
Պետրոս ներս մտաւ , Կուռնեղիոս ելաւ ,
Երկրպագելով , անոր ոտքն ինկաւ .
Պետրոս կանգնեցուց զայն , ըսաւ . — Կեցի՛ր ,
Ես ինքս ալ մարդ եմ , կանգնէ , հաք ելի՛ր —
Յայտնեց ներկայից թէ մի Հրէի
Գալ հեթանոսի է ապօրինի .
Բայց Աստուած ցուցուց իր սիրով անհուն ,
Զըսել անմաքուր որ և է մէկուն .

Աստուծոյ ձայնին հնազանդեցայ ,
Արդ ըսէք, ինչո՞ւ հոս կանչուեցայ :


* * *

Իր տեսած տեսիլքն Կուռներիոս պատմեց
Պետրոս զարմացաւ , ցնծութեամբ գոչեց . —
Ես ճշմարտապէս հասկեցայ հիմա
Որ Աստուծոյ քով խտրութիւն չկայ
Ս.Յ. իրմէ վախճողն , որ և է ազգի
Որ վերաբերի , է ընդունելի .



Ձեզ լաւ է ծանօթ որ Նազովրեցին —
Ձոր Աստուած օծեց , տալով Սուրբ Հոգին ,
Հրէաստանի մէջ կը պտըտէր ,
Բարիք ընելով իր կեանք կ'անցունէր ,

Աստուած իր հետն էր , ուստի բժշկեց ,
Եւ սատանայէն կապուածն արձակեց .
Անոր գործքերուն մենք ենք վկաներ ,
Ո՛հ , զայն կախեցին փայտէն Հրեաներ .



Եւ սպաննեցին անլուր տանջանքով ,
Բայց Տէրն զայն յարուց երրորդ օրն փառքով .
Յառնելէն ետեւ , Նա , մեռելներէն ,
Միասին կերանք խմեցինք նորէն ,
Նա մեզ պատուիրեց որ ժողովուրդին
Գարողենք իրեն խօսքն աստուածային .
Ինքն է դատաւոր ննջեցեալներուն ,
Դատաւոր Նաեւ կենդանիներուն ,

Նա որ հաւարայ Յէսուսի անունն ,
 Արժանի իւրաց զգաց խորութեան :
 Հազիւ Պետրոսի խօսքը վերջացաւ ,
 Ամենուն վրայ Սուրբ Հոգին իջաւ .
 Թրփատեալք ապշին երբ որ կը տեսնան ,
 Որ հեթանոսք ալ Հոգին ստանան .
 Այլ լեզուներով բոլորն կը խօսին —
 ԶՍտուաւած ի սրտանց փառաւորէին :

* * *

Պետրոս սկսի խնդազին գոչել .
 Կրնայ ասոնցմէ մին ջուրն արգիլել :
 Որոնք Սուրբ Հոգին իսկ ընդունեցան ,
 Եւ ամէն կերպով մեզ նմանեցան .
 Մկրտուեցան արդ Տէրոջը անուամբ ,
 Եւ ուրախացան մեծաւ ցնծութեամբ .
 Եւ խնդրեցին որ Պետրոս հոն մնայ ,
 Եւ քանի մը օր իրենց հիւր ըլլայ :
 Բերկրութեամբ Պետրոս հրաւերն ընդունեց
 Եւ նոր հաւատոյ մէջ զայնս հաստատեց :



15. ԹՎՓԱՏԵԼՈՑ ԲՈՂՈՒՐԸ

Հրեայ Քրիստոնեայք չէին ըմբռներ
 Որ վասն փրկութեան լոկ Գլ բան պէտք էր ,
 Այն է հաւարաւ Յէսուսի խաչն ,
 Իսպառ հրաշարել գործէն օրէնքն .
 Կուզէին օրէնքն մի ձեռօք բռնել ,
 Իսկ միւս ձեռօք խաչն լոկ շշուէլ ,
 Փոխանակ օրէնքն է բաց լանելու ,
 Եւ բոլոր սրբով Փրկին յարելու :

* * *

Այսպիսիք էին , որք երբ լսեցին ,
 Պետրոսի ընթացքն ընդ Կուռնեկիոսին .
 Բոլոր ուժովքին բարձան բողոքներ ,
 Զի հեթանոսի տունըն էր մըտեր .
 Պետրոս վշտացեալ , սիրտն ցաւօք լեցուած ,
 Սկսաւ պատմել բոլոր պատահած .
 Յետոյ աւելցուց , ձայնիւ եռանդուն .
 « Եթէ Տէր Յիսուս Գլ Եւ Խաչն Հոգւոյն
 Հրեան , հեթանոսն ըրաւ արժանի ,
 Կաղաչեմ ըսէք , միթէ կրնայի՞
 Աստուծոյ կամօցն հակառակ կենալ ,
 Եւ մկրտութիւնն անկէ զլանալ » :

Զայս որ լսեցին իսկոյն լռեցին ,
 Եւ զԱստուած սրտանց փառաւորէին . —
 « Ուստի , կրէին , հեթանոսներուն
 Ալ Տէրն է տուած ապաշխարութիւն » :

16. Ա Ն Տ Ի Ո Ք

Ստեփաննոսի մահուանէն ետեւ ,
 Հալածանք եղաւ սաստիկ , յարատեւ .
 Բազումք ցրուեցան Կիպրոս , Փիւնիկէ ,
 Անտիոք եկան , անցնելով անկէ :
 Սակայն Հրէից լոկ քարոզէին ,
 Եւ հեթանոսներն անտես կրնէին .
 Անտիոքի մէջ բազմաթիւ անձեր
 Հաւատացեր էին , և Տէրոջ դարձեր .
 Երուսաղէմէն երբ զայս լսեցին ,
 Բառնաբասն իսկոյն Անտիոք խրկեցին .
 Հաւատացեալներն նա կը հաստատէր ,
 Տէրոջ հետ կապուած մինալ յորդորէր :
 Անկէց Բառնաբաս մինչ Տարոն գընաց ,
 Եւ Սօղոսի հետ ընկերացած ,
 Իսկոյն միասին Անտիոք մեկնեցան ,
 Լման մէկ տարի հոն աշխատեցան :

Անտիոք եղաւ վասն քրիստոնէի ,
 Յոյժ նշանաւոր , անմոռանալի .
 Զի հաւատացեալք հոս արժանացան
 Առաջին անգամ Քրիստոնէայ անուան :

* * *

Քանի մը եղբարք « մարդարէ » կոչուած
 Երուսաղէմէն Անտիոք իջած ,
 Մին ինոցանէ , Ագաբոս անուն
 Վախով լեցունէ սրտերն ամենուն .
 Հոգւոյն զօրութեամբն մեծ սովմը ծանոյց
 Անփոյթ կեցողաց մտքերն արթնցուց .
 Ուստի տշակերտք կը հանգանակեն
 Եւ կարօտելոց օգնել կորոչեն .
 Հաւաքեալ դրամն Հրէաստան խրկուի :
 Որ երէցներէն սովելոց տրուի :
 Սօղոս , Բառնաբաս արդ կը խրկուին ,
 Դէպ' Երուսաղէմ , որ դրամն տանին :
 Առաջին օրէն օգնել Լիււսիայ ,
 Եղած է օրէնքն հին եկեղեցեաց :
 Սա պարտի մնալ անխախտ անաստան
 Մինչեւ դադարին , մեղք և սատանան ,
 Զարնել , հարուածել թշուառ մարդն անկեալ ,
 Մինչ մեղքն է ջնջեալ սատանան կապեալ :

17. Հ Ե Ր Ո Վ Դ Ի Ն Ս

Սատանան դարձեալ սառսիկ զայլացաւ ,
 Երբ խաչին խօսքը յաղթանակ տարաւ .
 Դրդեց Հերովդէսն , զայն ըրաւ գօրծիք
 Եկեղեցիին վրայ բերել չարիք :

* * *


Սա նախ Յակոբոսն սրով սպաննեց ,
 Հրեայք ցնծացին , Պետրոսն ալ բռնեց .
 Զնա բանտարկեց զատկական տօնին ,
 Տասն և վեց զինուորք հսկէին բանտին :
 Զայն տօնէն ետեւ , Հերովդէս արքան ,
 Կուզէր հանդիսիւ հանել կախաղան :

* * *

Մինչ Պետրոս բանտին մէջ խոր կը ննջէր՝
 Անդ եկեղեցին անդուլ կ'աղօթէր .
 Վերջին գիշերն էր Պետրոս ի բանտին ,
 Քնանար կապեալ չղթայով կրկին ,
 Քովիկն հսկէին երկու զինուորներ ,
 Յաջորդ օրն Պետրոս պիտի մեռցուէր :
 Պահապանք հսկեն դրանը առջին
 Փախուստն արդ լինէ խեղճ բանտարկեալին :

* * *

Լոյս մ'է կը ծագի , բանտն լուսաւորի ,
 Տէրօջը հրեշտակ բանտին մէջ կանգնի .
 Պետրոսին կողը ուժգին կը խթէ ,
 Իր խորունկ քունէն զայն կ'արթնցունէ .
 Շղթաներն կ'իյնան , կ'ըսէ « Շուտ եղիւր ,
 Գօտիդ մէջքդ կապէ , հողաթափդ հագիր ,
 Հանդերձդ վրադ առ , ետեւէս եկուր ,
 Եկուր ետեւէս , բանտարկեալդ տխուր . »



Գառի մը նման Պետրոս հնազանդէր
 Թէեւ եղածին խելքը չէր հառներ ,
 Ինք կը կարծէր թէ տեսիլք կը տեսնէ ,
 Թէ լոկ երազ մը զինք կը վրդովէ :
 Անցան առաջին պահապաններէն
 Ապահովապէս նաեւ երկրորդէն .

Հասան երկաթէ դրանը ամուր ,
Սա քաղաքն հանէր , սպասեն ի զուր .
Ոչ, աս ինքնիրեն անձայն կը բացուի ,
Հրեշտակն Պետրոսին հետ մէջէն կ'անցնի .
Յայնժամ և իսկոյն հրեշտակն զատուեցաւ ,
Պետրոս միայնակ պահ մը կանգ առաւ .
Շուտով հասկցաւ բոլոր եղածներն ,
— Հիմա հասկնամ , ըսաւ — ինչպէս Տէրն
Խրկեց իր հրեշտակն , Հերովդի ձեռքէն
Ազատեց զիս , և հրէից վրէժէն :

* * *

Մարիամի տունը ուղղեց իր քայլեր ,
Հոն կ'աղօթէին եղբայրներ , քոյրեր ,
Դուռն զարկաւ ուժղին , եկաւ Հռովդէ ,
Ականջ դնելու թէ արդեօք ո՞վ է :
Երբոր Պետրոսին ձայնը սա ճանչցաւ
Ուրախութենէն դուռը չբացաւ .
Ներս վազեց — Պետրոսն եկած է — գոչեց ,
Ուրախութենէն ցատքեց ու պարեց .
Անոնք կ'ըսէին — դու խենդեցեր ես ,
Եւ բերնիդ եկածն լոկ դուրս կը թափես —
Ազախինն պնդէր , ստոյգ է ըսածն ,
Ականջովն անոր ձայնն էր լսածն .
Պետրոսի հրեշտակն պէտք է որ ըլլայ —
Ըսին բոլորն ալ — ինք բանտը կը մնայ : —

Անդադար Պետրոս դուռը կը զարնէր ,
Բոլորն ապշեցան երբ նա բացուած էր ,
Սակայն ձեռքովը նա կ'ընէր նշան
Որ ձայն չհանեն , հանգարտ , լուռ կենան ,
Յետոյ մի առ մի ամենուն պատմեց ,
Թէ ինչպէս Տէրը զինքը ազատեց .
Եւ Յակոբոսին խնդրեց տալ իմաց ,
Իսկ ինք մեկնելով , ուրիշ տեղ գնաց :


* * *

Որքան ամչցաւ Հերովդէս արքան
Երբ յաջորդ առտուն Պետրոսն չգտան ,
Պահապաններէն իր վրէժը լուծեց ,
Զանոնք բոլորը անխնայ ջարդեց .
Յետոյ Կեսարիա իջաւ , հոն մնաց
Հերովդի վախճանն այլ եւս էր եկած :

* * *

Տիւրացիներն և Սիդոնացիներ ,
Հերովդէսի դէմ էին խռովեր .
Արդ եկան անոր սենեկապետին ,
Որ Հերովդէսի հետը հաշտուին .
Ուստի Հերովդէս մի օր որոշեց ,
Փառաւոր հազուած ատենաբանեց .
Բոլոր ունկնդիրք կ'աղաղակէին .
— Այդ չէ ձայն մարդկան , այլ աստուածային . —

Իսկոյն Աստուծոյ հրեշտակն զայն զարկաւ ,
 Քանզի Տէրոջը նա փառք չտուաւ .
 Բոլոր իր մարմին լեցաւ որդերով ,
 Մեռաւ փառամուն ահռելի կերպով .
 Անկաւ հալածիչն — սատանան — նորէն
 Յոյժ խայտառակեալ իր ասպարէզէն .
 Իսկ Աստուծոյ խօսքն կ'աճէր զօրանար ,
 Հաւատացելոց թիւն կը ստուարանար :



18. ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆՆ ՊՕՂՈՍԻ

Մինչ Անտիոքի մէջ հաւատացեալք ,
 Ծոմով աղօթից էին պարապեալք ,
 Կը հրամայէ անոնց Սուրբ Հոգին ,
 Պօղոսն , Բառնաբասն զատել այն գործին ,
 Որում Աստուած է զայնս հրաւիրեալ ,
 Այն է քարոզել իր խօսքն օրհնեալ :
 Ծոմապահութեամբ և աղօթելով ,
 Ապա ձեռքերնին վրանին դնելով ,
 Աւետարանիչ զայնս կը ձեռնադրեն ,
 Եւ ուրախութեամբ ճամբայ կը դնեն :

Իշան Սեւեակիա և ապա Կիպրոս ,
 Ի Սաղամինա քարոզեն Քրիստոս ,
 Հրեաներուն այն ժողովարաններն ,
 Եւ մխիթարեն հաւատացեալներն :
 Մի սպասաւոր , Յովհաննէս կոչուած
 Անոնց երկուքին էր ընկերացած :

* * *

Ի Պափոս գտան մոզքն բարձսուն ,
 Սուտ մի մարգարէ , ծանօթ ամենուն ,
 Փոխանորդ բդեչխն , Սերկիոս Պօղոս ,
 Այլ մի խելացի , պաշտօն վարէր հոս .
 Նա մոզին խօսքին տար ուշադրութիւն ,
 Անոր հետ կ'ընէր միշտ ընկերութիւն :
 Օր մը հրաւիրեց բդեչխն Սերկիոս ,
 Երկու քարոզիչքն , Բառնաբաս , Պօղոս ,
 Սակայն մոգն անոնց խստիւ դիմադրեց ,
 Ուստի Պօղոս ալ Սուրբ Հոգւով լցուած ,
 Աչքերն բարկութեամբ առ մոզքն ուղղած ,
 Գոչեց — Ո՛վ որդիդ դու յատանայի ,
 Ո՛վ արդարութեան վատթար թշնամի ,
 Լի ամէն տեսակ խաբեբայութեամբ ,
 Ստութիւններով , խորամանկութեամբ .
 Պիտի չդադարիս ճամբան ծռելէ ,
 Ժշմարտութեան դէմ հակառակելէ .
 Ահա Տէրոջ ձեռք վրադ ծանրանայ ,

Քու երկու աչքըդ պիտի կուրանայ .
Ատեն մը արենն պիտի չտեսնաս
Անտես և թշուառ , կոյր պիտի ըլլաս : —
Պատեց անոր աչք իսկոյն մէգ , խաւար ,
Առաջնորդ գանել սրտանց կը ցանկար ,
Փոխանորդ բղեչին ասի տեսնելով ,
Յիսուսի հաւտայ ահով , երկիւղով :

* * *

Աւետարանիչք այժմ Պէրդէ անցան ,
Յովհաննէսէն ալ հրաժարեցան .
Եւ Պիսիտիայէ Անտիոքն գալով ,
Շաբաթ օրն հրեայք դումարին ժողով .
Օրէնք , մարգարէք նախ կը կարդացուին ,
Աւետարանիչք ապա հրաւիրուին ,
Խօսել ժողովին բան յորդորական ,
Քարոզել անոնց ճամբան փրկութեան :
Պօղոս ոտք ելաւ , իր ձեռքը շարժեց ,
Եւ իր քարոզը այսպէս սկսեց . —
« Ինձ մտիկ ըրէք , իտրայեւացիք ,
Դուք որ Աստուծմէ վախնաք , երկնչիք ,
Աստուած մեր հայրերն առաջուց ընտրեց ,
Եւ Եգիպտոսէն զանոնք դուրս հանեց :
Անապատին մէջ քառասուն տարի
Կերակրեց զանոնք կերպով հրաշալի .
Քանանու մէջ եօթն ազգեր կործանեց ,

Եւ անոնց երկիրն մեզի պարգեւեց .
Չորս հարիւր յիսուն տարի դատաւոր ,
Տուաւ , և յետոյ կուգն թագաւոր .
Սամուէլ օծեց Սաւուղն անոնց վրայ ,
Ասոր յաջորդեց Դաւիթ իբր արքայ .



Սա էր Աստուծոյ սրտին հաճելի ,
Թէն մեղքերով , յանցանօք էր լի .
Դաւթի սերունդէն առաքեց Աստուած ,
Իսրայելի տան՝ Փրկիչ մը դթած .
Տէր Յիսուս Քրիստոս չսկսած գործի ,
Յովհաննէս բառնայ իր ձայն դեսպանի .
Սա կուգայ Անոր ճամբան պատրաստել ,

Ապաշխարութիւն , զղջում քարոզել .
 Իրեն դիմողներն նա կը մկրտէ ,
 Սակայն մի ազգու կերպով կը գոչէ , —
 Ես չեմ Մեսիան , ես արժան իսկ չեմ ,
 Որ անոր կօչկին կապերը քակեմ .
 Փրկութեան խօսքը ձեզ խրկուեցաւ ,
 Զի Երուսաղէմ յարգը չճանչցաւ ,
 Թէեւ կը կարգան ամէն շաբաթ օր
 Մարգարէներուն խօսքերն փառաւոր .
 Այո , Տէրն մահուան դատապարտեցին ,
 Եւ Պիղատոսէն վճիռն հանեցին .
 Անլուր չարչարանքն խաչին դառն մահուան ,
 Կրելէ ետեւ դնեն գերեզման .
 Սակայն Հայրն Աստուած զայն նորէն յարուց ,
 Յարուցեալ Յիսուսն զինք բազմաց ցուցուց .
 Անոր յարութեան ստոյգ վկաներն
 Քարոզեն մեր հարց եղած խոստումներն .
 Անոր միջոցով ձեզ կը քարոզուի ,
 Մեղաց թողութիւն և կեանք շնորհուի .
 Մեզ արդարանալ հնար չէր օրէնքով ,
 Այժմ էսրայրանսէ՛ւ լի հաւատով :
 Արդ զգուշացէք , դուք ալ չմերժէք ,
 Եւ Աստուածային պատիժն չ'կրէք » :

* * *


Բոլորն յուզուեցան այս պարզ խօսքերէն ,

Շատերն խնդրեցին որ խօսի նորէն .
 Յաջորդ շաբաթը բոլոր քաղաքը
 Ժողովի նորէն լսելու խօսքը .
 Հրեայք նախանձով լցուած դէմ կեցան ,
 Հայհոյութիւնով հակառակեցան :
 Պօղոս Բառնաբաս համարձակ ըսին —
 « Պարտ էր մեզ նախ յեւ հրաւիրել Փրկչին .
 Բայց քանի որ դուք զայն ձեզմէ մերժէք ,
 Երկնային կենաց դուք արժանի չէք .
 Ուստի մենք դառնանք այժմ հեթանոսաց ,
 Զի Տէրն այսպէս է մեզի պատուիրած . —
 « Բեզ հեթանոսաց լոյս և ջահ ըրի .
 Մինչև վերջին ծայրն անկեալ աշխարհի » :

* * *

Հեթանոսները կուրախանային ,
 Եւ յօժարակամ կը հաւատային .
 Եւ Տէրովք խօսք յոյժ կը տարածուէր ,
 Բոլոր գաւառը , մարդիկ նորոգէր .
 Սակայն Հրեայներ կը զրգուեն կանայք ,
 Առաքելոց դէմ հանել հալածանք .
 Իրենց սահմանէն զայնս կը վռնտեն ,
 Անոնք ալ ոտից փոշին կը թօթվին ,
 Եւ կը ճամբորդեն դէպ' Իկոնիոն ,
 Յաջողութիւն տայ Սուրբ Հոգին ևս հոն .
 Հրեայներ Յոյներ կը դառնան Տեառն ,

Իրենց ունայն յոյսն սրտերնուն բառնան .
 Կըլլան հրաշքներ և շատ նշաններ ,
 Եւ Տէրը «նշա՞ք խօսքին վկայէր :
 Ձհաւատացողք զօմանս զրդուեցին ,
 Բոլոր ժողովուրդն երկու մաս ըրին ,
 Մին առաքելոց կողմն էր անցած ,
 Իսկ միւսն Հրէից կողմնակից եղած ,
 Հակառակորդներն կընեն յարձակում ,
 Տեղի կը գտնէ ահեղ քարկոծում .
 Աւետարանիչք անկէ ևս փախան ,
 Անցան Լիւսդրակն և Դերբէ եկան :



19. ՊՕՂՈՍ Ի ԼԻԻՍՄԴՐԱ.

Ի ծննդենէ կաղ մարդ մ'ի Լիւսդրա ,
 Ձեռամբ Պօղոսի բուժում կը գտնայ ,
 Մինչ Պօղոս խօսէր , կաղն մօտիկ կընէր ,
 Այս մասին զայլքս կը գերազանցէր .
 Պօղոս տեսնելով որ հոս հաւատք կայ ,
 Որով նա բուժում ստանալ կրնայ ,
 Ըսաւ քարձրածայն , « ելիր և կանգնէ՛ ,
 Տէրն կաղութենէդ քեզ կը բժշկէ » :

Կաղն իսկոյն ելաւ , քալէր կը ցատքէր ,
 Իսկ ժողովուրդը ապշած կը գոչէր , —
 « Աստուածներն ահա մեզի եկեր են ,
 Մարդու կերպարանք թէ և կը կրեն » :
 Բառնաբասն Դիոս անուամբ կոչեցին ,
 Հերմէս անունն ալ Պօղոսին տուին .
 Իսկ Դիոսի քուրմն բերաւ պսակներ ,
 Նաև գեղեցիկ և պարարտ ցուլեր ,
 Եւ բազմութեան հետ պատրաստ էր զոհել ,
 Երկու մարդակերպ աստուածներն պատուել :

* * *

Պօղոս Բառնաբաս զայս որ լսեցին ,
 Իրենց հանդերձներն իսկոյն պատուեցին ,
 Խուռնն բազմութեան մէջէն վաղելով ,
 Աղաղակեցին քարձրածայն ձայնով . —
 « Մարդիկ , ի՞նչ կընէք , ձեզ նման ևս մենք ,
 Կրից ենթակայ , տկար մարդիկ ենք ,
 Եւ ճիշդ քարողենք , որ դուք կուռքերէն
 Հրաժարելով այդ փուճ բաներէն ,
 Կենդանի Աստուածն ճանչնաք , ընդունիք ,
 Եւ միայն Անոր , Անոր ծառայէք :
 Երկինք ու երկիր գործ են իր ձեռաց ,
 Ծովն և ամէն բան նա է ստեղծած .
 Անցեալ դարուց մէջ թողուց որ երթան
 Ամէն ազգ իրենց ընդունած ճամբան ,

Տուաւ երկիրքէն առատ անձրեւներ ,
 Ըրաւ երկիրքս բերրի , պտղաբեր .
 Տուաւ կերակուր և ուրախութիւն ,
 Իր անհուն սիրոյ ի վկայութիւն » : —
 Զայս ըսելով նա հազիւ արգիլեց
 Զոհին մատուցումն , և ամբօխն ցրուեց .
 Բայց Անտիոքէն և Իկոնիոնէն
 Հրեաներ եկան որ մարդիկն գրգռեն .
 Քարկոծեն Պօղոսն , կիսամեռ թողուն ,
 Քաշեն քաշքշեն դուրս , կը նետեն հեռուն .
 Հասնին աշակերտք , Պօղոս ոտք կելլէ ,
 Եւ անոնց հետը բաղաք կը մտնէ :

* * *

Հետեւեալ օրը Դերբէ կը մտնան ,
 Հոն ևս քարոզեն , բազումք հաւատան :
 Լիւսդրա , Իկոնիոն , Անտիոք կարգաւ ,
 Վայցեղեն , բաշխեն օրհնութիւն անբաւ .
 Նախ կը ցուցունեն թէ ամէն ատեն ,
 Բազում նեղութիւն կրել սպասեն .
 Շատ նեղութիւնով կարող ենք միայն ,
 Արժանի ըլլալ Տեառն արքայութեան .
 Ապա և ամէն մէկ եկեղեցի
 Երէց , քարոզիչ կը ձեռնադրուի :
 Պամբիւլիա , Պէրգէ , Ատալիա գալով ,
 Անտիոք հասնին առաքեալք նաւով .

Հոն կը հաւաքեն հաւատացեալներն ,
 Պատմեն Աստուծոյ մեծամեծ բաներն .
 Որ իրենց ձեռքով Տէրն էր կատարած ,
 Ուր որ երկուքը էին ճամբորդած .
 Հեթանոսաց դարձն , հաւատոյ տուններ ,
 Որ ամէն տեղեր Տէրը բացեր էր ,
 Եղաւ ամենուն մեծ ուրախութիւն ,
 Ի սրտանց տուին Տէրոջ գոհութիւն .
 Պօղոս Բառնաբաւ Անտիոք կենան ,
 Մինչև որ դարձեալ մի բաց դուռ տեսնան :



20. ԺՈՂՈՎ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

Հրեայ քրիստոնեայք դժուար դանէին ,
 Մահալով օրէնքը , հաւտալ լի Փրկչին .
 Զէին հասկնար թէ Դէ բաւ պէտք է ,
 Ասկէ աւելին Տէրն չ'պահանջէ .
 Հաւալ փրկուիլ , յէ փրկութիւն ,
 Անոնց պատճառէր մեծ դժուարութիւն .
 Խորհէին , պարտին գոնէ բաւ յ'ընել ,
 Մեղաց թողութիւնն անով ձեռք բերել :

* * *

Հրէաստանէն եղբայրներ իջան ,

Քարոզէին թէ առանց թլփատման ,
 Հնար չէ մարդկանց փրկութիւն գտնել ,
 Արդար Աստուծոյ սիրտն գոհացունել :
 Պօղոս Բառնաբաս փառաբանէին ,
 Հակառակէին , շատ վէճ կ'ընէին .
 Սակայն տեսան որ օգուտ մը չունէր ,
 Երուսաղէմի գիմնում մը պէտք էր :
 Անոնց ընկերներ տայ եկեղեցին
 Եւ Երուսաղէմ երթան ժողովին .
 Շուտ Փիւնիկէէն և Սամարիայէն
 Անցնելով , ամէն տեղեր կը պատմեն ,
 Ինչպէս հեթանոսք հաւատքի կուգան ,
 Եւ յաղթանակէ Սուրբ Աւետարան .
 Բոլոր լսողներն սրտանց ցնծային ,
 Բերկրութեամբ զԱստուած գովաբանէին :

* * *


Երուսաղէմի մէջ արդ ժողովեցան
 Առաքեալք , երէցք , եղբարք միաբան .
 Պօղոս , Բառնաբաս պատմեն թէ ինչեր ,
 Հեթանոսաց մէջ , Տէրը գործեր էր :
 Բայց փարիսեցի հաւատացեալք գան ,
 Օրէնքը բռնեն և հոն կը կենան .
 Օրէնքը պահել նաև հաւատալ ,
 Երկուքն հասն պարտին ընդհանր .
 Պարտին հեթանոսք առաջ թլփատուիլ

Յետոյ ազատ են անոնք մկրտուիլ :
 Առաքեալք , երէցք միաբանեցան ,
 Որ այս ծանր վէճին բարի վախճան տան .
 Պետրոս նախ ելաւ , այսպէս խօսեցաւ —
 Մարդիկ եղբայրներ , Աստուած հաճեցաւ
 Որ հեթանոսաց մէջ Աւետարանն
 Նախ եւ քարոզեմ , որ կեանք ստանան .
 Սրտադէտն Աստուած , պարգեւն Սուրբ Հոգւոյն
 Մեզի և անոնց տուաւ ամենուն .
 Չըրաւ անոնց և մեր մէջ խտրութիւն ,
 Հաւատքով միայն տուաւ փրկութիւն .
 Ուստի դուք ինչո՞ւ զԱստուած կը փորձէք ,
 Եւ եղբարց վրայ ծանր լուծ կը դնէք .
 Լուծ մը զոր ոչ մենք և ոչ մեր հայրեր ,
 Մինչ ցարդ վերցունել կարող ենք եղբեր .
 Ձի կը հաւատանք Փրկչին անունով ,
 Մենք ալ , անոնք ալ , փրկուինք շնորհքով :
 Պօղոս , Բառնաբաս ապա կանգնեցան ,
 Որ իրենց գործոց տեղեկագիրն տան .
 Պատմեցին թէ Տէրն քանի հրաշքներ
 Գործեց և դարձուց ետ հեթանոսներ :
 Խօսքի կարգն եկաւ արդ Յակոբոսի ,
 Որ նախ երկրորդեց խօսքն Պետրոսի .
 Ապա ցոյց տուաւ թէ մարգարէներ ,
 Նոյն բանն արդէն էին ուսուցեր : —
 Դաւիթի անկեալ խորանն , Տէրն կ'ըսէ ,

Թէ պիտի չինէ և վերականգնէ .
 Տէրն պիտի փնտռեն բոլոր մնացեալներ ,
 Իր անունն կոչող շատ հեթանոսներ :
 Ուստի , աւելցուց , հարկ չէ զայնս նեղել ,
 Բաւ է ընկ անոնց մի նամակ գրել .
 Կըռոց զոհուածներն և պոռնկութիւն ,
 Մերժել և խեղդուած անասնոց արիւն :
 Բոլոր ժողովէն այս ընդունուեցաւ ,
 Եւ նամակն իսկոյն շարադրուեցաւ .
 Պօղոս , Բառնաբաս , Շիղա և Յուդա ,
 Ժողովին կողմէն արդ ելան ճամբայ ,
 Ասոնք Անտիօք երբ ժամանեցին
 Բոլոր ժողովը մէկտեղ հաւքեցին ,
 Յանձնեցին նամակն , վէճերն գաղըեցան ,
 Եւ ամէն կերպով միութարուեցան :

* * *

Մի քանի օրէն Պօղոս և Շիղա ,
 Գացին Սիւրիա և Կիլիկիա .
 Ամէն տեղ խօսքը կը քարոզէին ,
 Նոր եկեղեցի կը հաստատէին .
 Իսկ Բառնաբաս ալ Յովհաննէսն ընտրեց ,
 Եւ ի միասին Կիպրոս նաւարկեց :
 Այսպէս երկու զոյգ աշխատաւորներ
 Աւետարանեն գիւղեր , քաղաքներ :



21. ՊՕՂՈՍ ԵՒ ՇԻՂԱ Ի ԲԱՆՏԻՆ


Պօղոս և Շիղա արդ Դերբէ եկան ,
 Եւ անկէ Լիւսիւրա ուղեւորեցան .
 Հոն Տիմոթէոսն գտան , որոյ հայր
 Յոյն էր , և սակայն Հրէայ անոր մայր :
 Հրէից համար զանի թրփատեց ,
 Անօգուտ վէճերն մէջտեղէն վանեց .
 Անցաւ Փռիւքիա և Գաղատիա ,
 Արգիլեց Հոգին կենալ Ասիա .
 Միւսիա եկան և երբ կուզէին
 Անցնիլ Բիւթանիա արգիլեց Հոգին .
 Իջան Տրովադա , գիշեր երբ հասաւ ,
 Պօղոս խիստ ազդու տեսիլք մը տեսաւ .
 Մակեդոնացի մարդ մը կայներ էր ,
 Զեռքերն տարածած այսպէս աղաչէր —
 « Ե՛կ Մակեդոնիա և մեզի օգնէ » ,
 Պօղոս հոն երթալ իսկոյն կորոշէ .
 Քանզի հասկեցաւ որ այս հրաւեր ,
 Իրենց ուղղակի Տէրն վերէն խրկէր :
 Տրովադայէն նաւը կը մանեն ,
 Եւ նաւարկելով Փիլիպպէ ելին .
 Շաբաթ օրն գալով , ըստ սովորութեան ,
 Գետեզերքն երթան երկրպագութեան .

Ծիրանավաճառ կին մի , Լիւդիա ,
Որոյ սիրտը Տէրն անձամբ կը բանայ .
Պօղոսի խօսքերն մեծ ուշադրութեամբ ,
Կը լսէ , դառնայ ևս յօժարութեամբ .
Ինք և իր տունը կը մկրտուի ,
Աւետարանիչքն իւր տուն կ'ընդունի :

* * *


Օր մը աղօթքի երբոր կ'երթային ,
Ճամբան դիւահար կնոջ մը պատահին ,
Անոնց ետեւէն սկսի պոռալ , —
Ծառայք են ասոնք Աստուծոյ բարձրեալ ,
Որ մեզ քարոզեն փրկութեան ճամբան ,
Այս Պօղոսն և իր ընկերը Շիղան :
Մի քանի անգամ այս պատահեցաւ ,
Ուստի Պօղոսի սիրտը վշտացաւ .
Յանուն Յիսուսի սաստեց աղախնին ,
Իսկոյն հեռացաւ , հարցուկ , չար ոգին .
Որ գուշակութեամբ , շատ վաստակ բերէր
Իրեն տէրերուն , զայնս հարստացնէր :
Ոգին հեռացաւ , աղջիկն բուժեցաւ ,
Անոր տէրերուն վաստակն կտրեցաւ .
Ուստի բռնեցին Պօղոսն ու Շիղան ,
Եւ տարին զանոնք հրապարակն արեանն : —
« Այս մարդիկ , ըսին , քաղաքն վրդովեն ,
Իրենք Հրեայ են , բայց սորվեցունեն ,

Շատ ուրիշ բաներ , տարբեր օրէնքներ ,
Զորս չեն ընդունիր Հռովմայեցիներ » :
Խռնեց բաղմուծիւն , աղմուկ , աղաղակ
Տակն ու վրայ եղաւ արդ ամբողջ քաղաք ,
Զօրագլուխներն զայնս մերկացունեն
Եւ զանոնք սաստիկ կը խարազանեն :



Կը վիրտօսրեն անոնց մարմինը ,
Յետոյ երկուքն ալ կը նետեն բանտը .
Բանտապետին ալ կուտան հրաման
Որ մեծ հօգ տանի բանտին պահպանման :
Ոտքերնին կոճղի մէջ ամրապնդած ,
Ամբողջ մարմիննին վէրքերով պատած :

Զարմանք , լսեցէք , անոնք ինչ կ'ընեն —
Պօղոս և Շիլա կ'երգեն , կ'աղօթեն :
Բոլոր բանտարկեալք ապշած , զարմացած ,
Աղօթից , երգոց , ականջ են դրած .
Մինչեւ կէս գիշեր այս շարունակէ ,
Բանտ չէ այս , այլ հոս Աստուծոյ Գոհն է :
Յանկարծ մի սաստիկ երկրաշարժ կ'ըլլայ ,
Ու բոլոր բանալը ի հիմանց թնդայ .
Բոլոր գոռները իսկոյն բացուեցան ,




Բանտարկեալներուն կապանքներն ինկան .
Բանտապետն զարթնու , անսնէ սարսռած ,
Որ բանտին գոռերն բոլորն են բացուած .
Թուրը կը քաշէ , որ զինքն սպաննէ ,
Զի բանտարկեալներն փախած կը կարծէ ,

Քարձրածայն գոչեն Պօղոս և Շիլա —
« Դու անձիդ փնտս մի՛ ըներ , ահա
Հոս ենք ամենքրս , մէկը չէ փախած » :
Բանտապետն յայնժամ ճրագ մը առած
Խուցը կը վազէ դռով , սարսափով ,
Եւ գետինն իյնայ անոնց ոտից քով :
Յետոյ զանոնք դուրս , գաւիթը կը բերէ ,
Դողդոջուն ձայնիւ այսպէս կը գոչէ . —
« Տէրեր , ինչ ընեմ , ըսէք , պաղատիմ ,
Ինչ ընել պարտիմ , որ մեղքէ փրկուիմ » .
Աւետարանիչքն պատասխանեցին —
« Հաւատն դու Տէր Յիսուս Քրիստոսին .
Պիտի փրկուիս , ոչ թէ միայն դուն ,
Այլ քուկիներդ եւս , և քու բոլոր տուն » :
Ապա քարոզեն խօսքն ճշմարտութեան ,
Պարզեն ճանապարհն կենաց , փրկութեան :
Բանտապետն լուայ արդ անոնց վերքերն ,
Ապա մկրտուին ինք և իրեններն ,
Զանոնք տուն տանի , պատրաստէ սեղան ,
Ուրախ լինի ինք , ընտանիքն համայն :

* * *

Առտուն զօրականք մարդիկ կը խրկեն ,
Հրաման կ'ընեն որ զայնս արձակեն ,
Բանտապետն գալով Պօղոսին պատմեց ,
Թէ ազատութեան հրամանն ընդունեց .

« Ոչ, ըսաւ Պօղոս, ոչ այդպէս չըլլար,
 Խարազանեցին մեզ անգթաբար,
 Եւ բանտարկեցին առանց յանցանքի,
 Որ ենք անմեաւ Հռովմայեցի .
 Ոչ, թող իրենք գան և զմեզ հանեն » :
 Անոնք ալ վախնան, խնդրեն, աղաչեն,
 Որ անկէ ելլեն ուրիշ տեղ երթան,
 Անոնք ալ ելան Լիւդիա եկան :
 Պատմեցին թէ Տէրն զիրենք ազատեց,
 Բանտն հիմէն շարժեց, չղթաներն կոտորեց :



22. ԱՆԾԱՆՕԹ ԱՍՏՈՒԱԾԸ

Պօղոս, Շիղա գան Թեսաղոնիկէ,
 Եւ ինչպէս անոնց սովորութիւնն է,
 Մանեն Հըրէից ժողովարանը,
 Եւ կը քարոզեն Աւետարանը :
 Երեք շաբաթներ կապացուցանէր,
 Թէ Քրիստոսի չարչարուիլ պէտք էր,
 Յարութիւն առնել, ապա համբառնալ,
 Թէ ան Յիսուսն էր Աստուծոյ Օծեալ :

* * *

Ունկնդիրներէն ամէն Հրեայ Յոյն,
 Կը հաւատային, շատ մեծ բազմութիւն :
 Չը հաւատացողք նախանձին սակայն,
 Անօրէն մարդկանց պարագլուխ կըլլան .
 Աղմուկ կը հանեն, յուզումը շատնայ,
 Բոլոր քաղաքը կըլլայ տակն ու վրայ .
 Աւետարանիչք իսկոյն կը փախչին
 Եւ կապաստանին ի տունն Յասոնին .
 Խռովեալ ամբօխը Յասոնն կը բռնեն,
 Քաղաքապետին առջին կը բերեն .
 Կը պռնան — աշխարհք յեղափոխողներն,
 Վերջապէս հոս ալ խառնել եկեր են .
 Որոնք մեր կայսեր հակառակ գործեն,
 Ուրիշ թագաւոր — Յիսուսն — քարոզեն .
 Արդ Յասոն տուաւ ապահովութիւն,
 Շուտ դադարեցաւ այս խռովութիւն .
 Կաղատին շուտով Պօղոսն ու Շիղան,
 Որոնք գիշերանց Բերիա կերթան :
 Աւելի ազնիւ են Բերիացիք,
 Քանզի ոչ թէ լոկ ընդունին Սուրբ Գիւրք,
 Այլ զայնս ամէն օր ճշդիւ կը քննեն,
 Թէ արդեօք անոնք ճամարութիւն են :
 Հոն ալ խօսքն շատերն հաւատոյ բերաւ :
 Խառնակիչք հասան և ժողովուրդին
 Միտքն շփոթեցին, սրտեր զրդռեցին :

Պօղոս կը փախչի և Աթէնք երթայ ,
Բերիա մնան Տիմոթէոս , Շիղա :

* * *

Պօղոս առանձինն Աթէնք մնացած ,
Սիրան ու հոգին են անհանգիստ եղած .
Քանզի կը տեսնէր որ քաղաքն համայն
Խոր ընկղմեալ էր ի կռապաշտութեան .
Միշտ կը քարոզէր թէ Հրեաներուն ,
Եւ թէ բարեպաշտ մարդկանց խումբերուն ,
Տան , փողոցի մէջ և հրապարակ ,
Խօսքին սերմն ցանէր ամէն ժամանակ .
Եպիկուրեանք և Ստոյիկեաններ ,
Կընէին անոր հետ շատ մը վէճեր .
Ձայն Արիստոքոսն առաջնորդեցին ,
Նոր հաւատքն գիտնալ կը փափաքէին :

* * *

Արիստոքոսին մէջ Պօղոս կանգնած ,
« Ով Աթենացիք , ուշ դրէք , պոռաց ,
Ամէն կողմանէ խիստ կրօնասէր ,
Գտած եմ զձեզ , — ասի չեմ ծածկեր : —
Ես պտըտելով , տաճարն զննելով
Լռիկ կանգնեցայ սեղանի մը քով .
Անոր վրայ տեսայ քանդակեալ գրուած ,
« Անճանօթ Աստուած , Անծանօթ Աստուած » :

Այս նոյն Աստուածն է զոր ես քարոզեմ
Որ ձեզ անծանօթ է , ինչպէս անսնեմ :
Դուք զայն կը պաշտէք առանց ճանչնալու ,
Եւ ես կուգամ զայն ձեզ ճանչցունելու .
Ան է Արարիչ երկնի ու երկրի ,
Ծովուն և անոր մէջ գտնուածի ,
Նա է Տէր երկնից , ձեռագործ տաճար
Անոր բնակութեան երբեք չէ յարմար .
Նա բնաւ կարօտ չէ մարդկանց նուէրի ,
Քանզի ինք կուտայ շունչ , կեանք ու հոգի .
Աշխարհըս համայն , ազգերն մարդկութեան ,
Նա Դէլ արիւնէ բերաւ գոյութեան .
Իւրաքանչիւրէն Նա բնաւ չէ հեռու ,
Պէտք չկայ կոյրի պէս խարխափելու .
Բոլորըս անով կ'ապրինք , կը շարժինք ,
Մեր կեանքն միշտ և լոկ Անոր կը պարտինք :
Ձեր բանաստեղծներն ինձ լաւ ծանօթ են ,
Որոնք « Աստուծոյ ցեղէն ենք » կըսեն ,
Ոսկի , արծաթ , քար ուրեմն կրնան ,
Այն մեծ Աստուծոյն ըլլալ յար , նման .
Այս բարի Աստուածն մեր տգիտութիւնն
Չը սեպեր յանցանք , տայ պատեհութիւն ,
Որ զինք ճանաչենք , և այժմ որ գիտէք ,
Ապաշխարութիւն պէտք է դուք ընէք .
Քանզի որոշած է որ մ'ահուելի ,
Մէծ դատարանի — խորհուրդ ստակալի —

Երբ դատէ պիտի Նա արդարութեամբ ,
Աշխարհըս համայն , անաշառութեամբ ,
Այն մարդուն ձեռքով զոր ինքը յարոյց ,
Եւ փառքով պատուով աջ կողմ նստեցուց :

* * *

Յարութեան խօսքը երբոր լսեցին ,
Ոմանք ծաղրէին , ոմանք ըսէին .
« Ուրիշ անգամ երբ ժամանակ գտնենք ,
Այդ բանին վրայ դարձեալ կը լսենք » .
Սակայն Պօղոսի խօսքն ապարդիւն չէր ,
Եղան մի քանի հաւատացողներ .
Դիոնեսիոս Արիսպագացին ,
Նաեւ Դամարիս անունով մի կին ,
Նաեւ ուրիշներ որոնց անուններ
Պիտի տեսնուին , երբ բացուին դռներ :



23. ՊՕՂՈՍ Ի ԿՈՐՆԹՈՍ

Պօղոս Աթէնքէն Կորնթոս եկաւ ,
Ակիւղաս անուն մարդ մը հոն գտաւ .
Որ իր կնոջ հետ — Պրիսկիլային —
Հռովմէն Կորնթոս փոխադրեալ էին .


Անոնց տունն իջաւ , հոն կը բնակէր ,
Եւ գտնելով որ արհեստակիցն էր ,
Անոր հետ մէկաեղ կը շինէր վրան ,
Նաեւ քարոզէր Սուրբ Աւետարան :
Շիղա ալ հասաւ , եւս Տիմոթէոս ,
Երեքն քարոզեն Յիսուս Քրիստոս .
Հրեայք սկսան անոնց դէմ դնել ,
Եւ հայհոյելով զայնքս անարգել .
Պօղոս ալ թօթուեց իրեն հանդերձներ
Եւ ըսաւ . — Արիւն ձեր , ի գլուխ ձեր ,
Անպարտ եմ , անպարտ ես ձեր արիւնէն ,
Հեթանոսներուն կ'երթամ ձեր մէջէն » :
Յուստոսին տունը ատեն մը մնայ .
Ժողովրդապետն — Կրիսպոս — հաւատայ :
Շատ Կորնթացիք խօսքը կ'ընդունէին
Կը հաւատային և մկրտուէին :

* * *

Դիշերն երեւցաւ Տէր մեր ի տեսլեան ,
Պօղոսին ըսաւ բանք խրախուսական .
« Խօսէ , ով Պօղոս , բնաւ մի վախճար ,
Խօսէ համարձակ և լուռ մի կենար .
Քու հետդ եմ , ոչ ոք դէմդ պիտի ելլէ ,
Ոչ ոք քեզ մնաս պիտի հասցունէ .
Բազում ժողովուրդ քաղքիս մէջ ունիմ ,
Անոնցմով պիտի ես փառաւորուիմ » :

Հոն կեցաւ Պօղոս մէկ ու կէս տարի ,
 Խօսքը քարոզեց համարձակ , յայտնի :
 Հրեայնէր սակայն հոն ալ կը կատարէին ,
 Պօղոսն բռնելին ատեան կը տանին :
 Զայն կ'ամբաստանեն թէ նա մարդիկներն
 Կը հրապուրէ եղծել օրէնքներն :
 Բռնելն — Գաղիոն — Հրեաներն ճամբեց ,
 Զանոնք ատեանէն վանեց , վռնտեց ,
 Կրօնի վէճերն , — ըսաւ — դուք տեսէք ,
 Այդ խնդիրները յետ մէջ լուծեցէք :
 Ժողովրդապետն Յոյներն բռնեցին ,
 Ատեանին առջին գանակոծեցին :
 Պօղոս ալ պահ մը Կորնթոս կեցաւ ,
 Ապա Եփեսոս ուղեւորեցաւ :
 Կենքրա որ հասաւ գլուխը փոքրեց
 Որով ուխտաւոր ըլլալը յայտնեց :
 Հասաւ Եփեսոս , ընդ Ակիւղասի
 Եւ անոր կնոջ — Պրիսկիլայի : —
 Արդ Հրեայք խնդրեն որ նա հոն մնայ ,
 Բայց Պօղոս ըսաւ թէ պէտք է երթայ
 Երուսաղէմ , և մօտակայ տօնին
 Ինք և ընկերներն մասնակից լինին :
 Խոստացաւ նորէն Եփեսոս դառնալ ,
 Բայց , ըսաւ , Տէրոջ կամբէն է կախեալ :
 Կեսարիոյ ճամբով Սուրբ քաղաք հասաւ ,
 Եկեղեցիին բարեւներ բերաւ :

Ապա Անտիոք , յետոյ Գաղատիա
 Շրջելով հասաւ նա ի Փռիւղիա :
 Ամէն տեղ կարգաւ խօսքն կը քարոզէր
 Եւ աշակերտներն ալ կը հաստատէր :



24. Ա Պ Օ Ղ Ո Ս

Ապօղոս — Հրեայ — Աղեքսանդրացի ,
 Ճարտասան , գիտուն և այլ խելացի :
 Հոգւով ջերմեռանդ , Սուրբ գրոց վարժուած ,
 Եփեսոս քաղաքն հաղիւ էր հասած :
 Ժողովրդեան մէջ խօսքն կը քարոզէր ,
 Համարձակաբար բարի սերմն ցանէր :
 Նա գիտէր սակայն լոկ Յովհաննէսին
 Մկրտութիւնը յ'ապաշխարութիւն :
 Ուստի Ակիւղաս և Պրիսկիլա
 Ապօղոսն իրենց քովն առնեն , ապա
 Կը դաստիարակեն զայն մեծ խնամով
 Աստուծոյ ճամբան ուսուցանելով :
 Ապօղոս ուղեց Աքայիա երթալ ,
 Աշակերտներն ալ ի սրտէ բերկրեալ
 Նամակ մը գրեն հոն եղբայրներուն ,

Կը յանձնարարեն զայն իրենց սիրոյն :
 Նա հոն հասնելով օգտակար եղաւ ,
 Կ'ապացուցանէր հրապարակաւ ,
 Թէ Յիսուս Քրիստոս ի մարդկանց խաչեալ
 Տէր է և Փրկիչ և Աստուած օրհնեալ :

25. ՊՕՂՈՍ ԵՓԵՍՈՍԻ ՄԷՉ

« Աստուծոյ կամօք » յաջողի Պօղոս ,
 Շատ կողմեր շրջիլ և գալ Եփեսոս .
 Հոն նա կը գտնէ հաւատացեալներ ,
 Որ Սուրբ Հոգիին անունն չեն լսեր .
 Թէև հաւատացած և թէ մկրտուած ,
 Եւ եկեղեցւոյ ծոցն են ընդունուած :
 Պօղոս կիմանայ , անոնք են միայն
 Ծանօթ , Յովհաննու պարզ մկրտութեան ,
 Կըսէ — Յովհաննէս ջրով մկրտէր ,
 Ապա յիսարութիւն նա կը քարոզէր ,
 Եւ կազդարարէր ալ ժողովուրդին ,
 Որ իրմէ ետեւ եկող Յիսուսին ,
 Գառլին Աստուծոյ , պարտին հաւատալ ,
 Որ եկաւ մարդկանց մեղքերը բառնալ : —

Այս որ լսեցին շուտ մկրտուեցան ,
 Յանուն և ի փառս Սուրբ Երրորդութեան .
 Պօղոս երբ անոնց վրայ ձեռք դրաւ ,
 Իւրաքանչիւրը Սուրբ Հոգին առաւ .
 Տարբեր լեզուներ արդ կը խօսէին ,
 Մարգարէութիւնն նաեւ կընէին .
 Բոլորն էին տասներկու հոգի ,
 Որոնք յարեցան հօտին Յիսուսի .
 Հոն երեք ամիս Պօղոս շարունակ ,
 Խօսքը քարոզէր արձակ , համարձակ :

* * *

Հակառակութիւնք սկսան նորէն ,
 Ուստի հեռացաւ ժողովատունէն ,
 Գնաց Տիւրանի բացած դպրատուն ,
 Հոն հաւաքուէին , խօսէր ամենուն :
 Երկու տարիներ զայս շարունակեց ,
 Մինչև որ Հրեայք և Յոյնք համադեց :
 Աստուած Պօղոսի ձեռքով ևս կընէր ,
 Շատ նշանաւոր և մեծ հրաշքներ .
 Կառնէին իրմէն թաշկինակ , գողնոց ,
 Սա լինէր դարման , դեղ վշտաց , ցաւոց :
 Նաեւ չար հոգիք հնազանդէին ,
 Պօղոսի ձայնին ու հրամանին :

* * *

Քահանայապետն , Սկեւա ունէր ,
 Շատ հետաքրքիր եօթն որդիներ ,
 Փորձեցին ասոնք հրաշքներ գործել ,
 Պօղոսի նման դեւերը հանել :
 Զար ոգին գոչէր — Պօղոսն ճանաչեմ ,
 Բայց ձեր ո՛վ ըլլալն եհօք չ'գիտեմ —
 Անոնց վրայ ցատքեց ու զանոնք բռնեց ,
 Մերկ և վիրաւոր տունէն դուրս վանեց .
 Բոլոր լսողներն վախով լեցուեցան ,
 Մեծարանք տուին Յիսուսի անուան :
 Հաւատացեալներն խոստովանէին
 Իրենց յանցանքներն , լալով պատմէին ,
 Եւ կախարդութեան ալ հետեւողներն ,
 Պօղոսի յանձնեն իրենց վատ գրքերն .
 Զայնըս այրեցին ամենուն առջին ,
 Որ յիսուն հազար արծաթ կարժէին :

26. ԱՐՏԵՄԻՍ

Մեծ խռովութիւն , կռիւ ահռելի ,
 Եփեսոսի մէջ յետոյ պատահի ,
 Եւ Պօղոս տեսնէ՝ Տէրն է իր պաշտպան ,
 Եւ նեղութեան մէջ , հզօր օգնական :

* * *

Մի արծաթագործ , ճարտար և կարող ,
 Անուամբ Դէմէտրիոս , վարպետ կուռք շինող .
 Արտեմիսին փոքր տաճարներ շինէր ,
 Եւ զանոնք յետոյ մեծ շահով ծախէր :
 Արդ Դէմէտրիոս ժողով գումարեց ,
 Եւ ոսկերիչներն բոլոր հաւաքեց .
 — Մարդիկ , ըսաւ նա , արդեօք չէ՞ք գիտեր ,
 Վտանդի մէջ են բոլոր մեր շահեր .
 Քանզի այս Պօղոս կը սորվեցունէ ,
 Թէ ձեռքով շինուածն իրօք Աստուած չէ .
 Զէ թէ լոկ մեր շահն ձեռքերնուս կերթայ ,
 Բայց աստուածուհւոյն պատին ի՞նչ կըլլայ » : —

* * *

Այս ճառն լաւ ազդեց , սրտերը յուզեց ,
 « Մեծ է Արտեմիս » ժողովը գոչեց .
 Քաղաքն լեցուեցաւ խռովութիւնով ,
 Պօղոսի ընկերքն յափշտակելով ,
 Թատրոն վազեցին , կը կանչուըռտէին , —
 « Մեծ է Արտեմիսն Եփեսացիին » :
 Ատենապետը , այլ մի մտացի ,
 Դուչեց , — « Լսեցէք , արք Եփեսացի ,
 Որո՞յ չէ ծանօթ որ մեր Եփեսոս
 Իր պաշտպանն ունի Արտեմիս , Դիոս ,
 Արդ անվիճելի է այս բանն արդէն ,
 Ուստի վարուեցէք դուք հանդարտօրէն ,

Եթէ Դէմէարիոս կուզէ դատաստան ,
Ամէն օր բաց է քաղաքիս ատենն ,
Հոն թող նա դիմէ , և հոն թող դատուի ,
Հոն իր իրաւունքն պիտի որոշուի » :
Այսպէս ըսելով ամբօյրը ցրուեց ,
Եւ ժողովուրդը տեղերնին խրկեց :
Աղմուկն դադրեցաւ , փոթորիկն անցաւ ,
Պօղոս ալ քաղքէն շուտ ճամբայ ելաւ .
Դարձաւ վերստին ի Մակեդոնիա ,
Երեք ամիսներ ալ հոն կը մնայ .
Հոն ևս Հրեաներ նենգութիւն կ'ընեն ,
Ուստի Սուրիա նա դառնայ նորէն :

* * *

Ի Տրովադա կիրակի գիշեր ,
Ժողով մը կ'ըլլար , Պօղոս քարոզէր :
Մի երիտասարդ , Եւտիքէս անուն ,
Պատուհանն նստած էր ի խորունկ քուն ,
Քարողն երկնցաւ , նա խորթալ սկսաւ ,
Եւ երրորդ յարկէն փողոցը ինկաւ .
Անկեալ Եւտիքէսն մեռեալ վերցուցին ,
Ժողովն յուզեցաւ , բոլորն ողբացին :
Քաջարի Պօղոս մինակ կը մնայ ,
Եւ խռովեալներուն խըրախոյս կուտայ ,
« Տղան մեռած չէ » ըսէ և նորէն
Խօսքը քարոզէ , հանդարտ , լրջօրէն .


Պատանին դարձեալ ողջ առողջ բերուի ,
Ամենուն սիրտը բերկրութեամբ լեցուի :

* * *

Անկէ ելլելով կուգայ Մելիտոս ,
Պատգամաւորներ խրկէ Եփեսոս .
Եկեղեցիին երէցներն կանչէ ,
Եւ այսպէս անոնց իր խօսքը ուղղէ . —
« Դուք բոլորդ այսօր էք իմ վկաներ ,
Թէ ինչպէս Տէրոջ ես եմ ծառայեր .
Խոնարհութիւնով , շատ արցունքներով ,
Փորձանք , նեղութիւն , տանջանք կրելով .
Օգտակար մի բան բնաւ զանց չըրի ,
Ի տան , առանձինն , ի հրապարակի .
Հրէից , Յունաց և բոլոր մարդկանց ,
Ուսուցանէի ճանապարհն կենաց .
Ապաշխարութիւն , հաւատք առ Յիսուս ,
Յաւիտենական ստոյգ կենացն յոյս :
Ահա ես կերթամ այժմ Երուսաղէմ .
Ինձ ինչ պատահելն բնաւ չգիտեմ .
Բայց Հոգին ըսէ — սպասեն կապեր
Ինձ , և բազմութիւ դառն նեղութիւններ :
Սակայն ես ոչ մէկ բանի հոգ կ'ընեմ ,
Զի անձս պատուական բնաւ սեպած չեմ .
Բաւ է կատարել ընթացքս ցնծութեամբ ,
Եւ իմ պաշտօնս հաւատարմութեամբ .

Սակայն ստոյգ է որ ալ ևս զիրար
 Յայսրմ աշխարհի գուցէ չենք տեսնար .
 Ուստի այսօր ես ձեզ կը վկայեմ ,
 Որ ձեր ատեանէն ես ինքս անպարտ եմ ,
 Զի ետ չկեցայ , ձեզի յայտնեցի ,
 Աստուծոյ կամբը ձեզ սորվեցուցի ,
 Զգոյշ կեցէք ձեր անձին և հօտին ,
 Որոյ ձեզ տեսուչ գրած է Հոգին :
 Սուրբ եկեղեցին , արեամբ ստացեալ ,
 Պէտք է միշտ հովուէք եռանդով լցեալ .
 Քանզի գիտեմ որ երբոր ես երթամ ,
 Փարատող գայլեր պիտի գան յայնժամ .
 Այնպիսի մարդիկ ներս պիտի մտնեն ,
 Որ թիւր և մուլար բաներ սորվեցնեն .
 Արդ արթուն կեցէք և միշտ յիշեցէք
 Որ երեք տարի գիշեր և ցերեկ ,
 Զգադարեցայ միշտ յորդորելէ ,
 Արցունք թափելով ձեզ խրատելէ :
 Զեզ յանձնեմ , եղբարք , ի բոլոր սրտանց ,
 Աստուծոյ և իր խօսքին շնորհաց .
 Որ նա է կարող զձեզ շինելու ,
 Եւ ժառանգակից ընդ սուրբս ընելու :
 Ես չցանկացայ մէկուն արծաթին ,
 Կամ թէ ոսկիին և կամ հագուստին ,
 Դուք ձեզմէ գիտէք թէ աս իմ ձեռքերս ,
 Հոգացին բոլոր կարօտութիւններս .


Ես ձեզ ցոյց տուի թէ պարտիք դործել ,
 Եւ կարօտելոց օգնութիւն ընել .
 Միշտ միտք բերելով խօսքն Տէր Յիսուսի —
 Տալը քան առնելն է երանելի » :
 Այս սրտաճմլիկ ուղերձն ըրաւ ,
 Եւ ամենուն հետ ծնկան վրայ եկաւ .
 Աղօթք ընելով բոլորն կուլային ,
 Նաև Պօղոսին վիզը կիյնային :
 Զայն համբուրէին , սրտերնին ցաւէր
 Մանաւանդ երբոր Պօղոս կը զրուցէր ,
 Այլ ևս չի պիտի ելեոր տեսնեն ,
 Մինչև երկնից մէջ զիրար վայելեն :
 Ամենքն նաւն գացին , նա ճամբայ ելաւ ,
 Եւ իւրաքանչիւր իր տունը դարձաւ :



27. ՊՕՂՈՍԻ ԶԵՐԲԵՎԱԼՈՒՄԸ

Առագաստն բացած նաւըն Պօղոսի ,
 Սլանար , քերէր ափունքն Տիւրոսի .
 Երկնից հովերը յաջող կը փչեն ,
 Աւետարանին Տիւրոս կը բերեն :
 Հոն նա կը գտնէ հաւատացեալներ ,
 Անոնց քով անցնէ եօթն քաղցրիկ օրեր .

Հաւատացեալներն Հոգիէն ազդեալ,
Խնդրեն Պօղոսէն սուրբ քաղաք չերթալ.
Ի զոր, Առաքեալն ճամբու պատրաստուած,
Արք, կանայք, աղայք մեծ խումբ մը կաղմած
Ամէնը մէկէն քաղքէն դուրս կելլան,
Եւ ծովուն եզերքն ծնկան վրայ կուգան:
Աղօթք ընելով տան վերջին ողջոյն,
Ինք նաւը մանայ, անոնք դառնան տուն:



Ի Պատդեմայիս օր մը կը կենայ
Եւ եղբայրներուն տունը հիւր կ'ըլլայ.
Նաւն կեսարիա յաջորդ օրն հասնի,
Փիլիպպոսի տունն կը հիւրընկալուի.
Աւետարանիչ էր նա, և ունէր
Առողջ և կայտառ չորս կոյս աղջիկներ.
Որք բոլորն էին Տէրօջ նուիրեալ,
Եւ պաշտօննին էր մարդարէանալ:

Հրէաստանէն գայ մի մարդարէ
Ագաբոս անուն և գօտին կ'առնէ,
Կապէ Պօղոսին ոտքերն և ձեռքեր
Կ'ըսէ, — Լսեցէք, այսպէս ասէ Տէր. —
Այն մարդը որոյ գօտին պատկանի
Երուսաղէմի մէջ պիտի կապուի,
Պիտի մատնուի անդ հեթանոսաց
Եւ արժանանայ բազում նեղութեանց:
Բոլորն կը խնդրեն որ Պօղոս ձգէ
Երուսաղէմը, և հոն չայցելէ:
«Ինչ կ'ընէք, ըսէ Պօղոս, ինչ կուլար
Սիրտըս կը խոցէք, վէրքեր կը բանաք.
Ես ոչ թէ յօժար եմ հոն կապուելու
Այլ վասն Յիսուսի նաև մեռնելու»:
Տէրօջը կամբը, ըսին, թող ըլլայ,
Երբ տեսան Պօղոս որ ճամբայ կ'ելլայ:

* * *

Արդ Երուսաղէմ Պօղոս կը հասնի,
Եւ եղբայրներէն սիրով կընդունուի.
Ժողով դումարի, երէցներն կուգան,
Պօղոսի գործոց կը տեղեկանան.
Զի նա մի առ մի անոնց կը պատմէր,
Հեթանոսաց մէջ ինչպէս յաջողէր.
Բոլորը փառք տուին, և անոր ըսին —
«Կը տեսնե՞ս եղբայր, գործոցն օրէնքին»

Նախանձաւորներն ինչպէս են յուզուած ,
 Քանզի քու վրադ լուր է տարածուած ,
 Թէ դու օրէնքներն ստնակոխ կրնես ,
 Աշխարհն Մովսէսէն կապտամբեցնես .
 Արդ կը գտնուին չորս անձինք մեր քով ,
 Անոնց գլուխներ ածիլել տալով ,
 Փոքրիկ մի ծախքով ուխտաւոր կըլլան ,
 Յետոյ քեզի հետ տաճար կը մտնան .
 Այս բանն հաճոյ գայ Հրէաներուն ,
 Եւ չեն հաւատար ալ լսածներնուն » :
 Կեղծաւորական խորհուրդիւ այս չար ,
 Խեղճ Պօղոս անսաց միամտաբար ,
 Ըրաւ զոր նոքա հրամայեցին ,
 Տաճարը գացին հինգն ի միասին :

. . .

Ուխտին եօթն օրեր դեռ չլմնցած ,
 Հրեայներ զանի տաճարն են տեսած .
 Ձանի բռնելով աղաղակ բառնան —
 Իօրայեղացիք , հասէք օգնութեան :
 Ահա այն մարդը որ մեր օրէնքներ ,
 Ամէն տեղ ջնջէր , աւրէր , խափանէր ,
 Համարձակեր է տաճարն իսկ պղծել ,
 Հեթանոս Յոյներն սուրբ տեղն մայրունել —
 Ժողովուրդն մէկտեղ համախմբեցաւ ,
 Պօղոս տաճարէն փողոց քաջուեցաւ .

Տաճարին դռներ իսկոյն կը գոցեն ,
 Պօղոսն սպաննել իսկոյն ձեռնարկեն .
 Հազարապետը զայս իմանալով ,
 Հարիւրապետով , գունդ մը զինուորով
 Ատենին հասաւ վայրն խռովութեան ,
 Պօղոսն ծեծելէ Հրեայք դադրեցան :
 Հազարապետը հրաման ըրաւ ,
 Կրկին շղթայով Պօղոս կապուեցաւ .
 Անոր նկատմամբ հարցուփորձ կրնէր ,
 Բայց ստոյգն գիտնալ անկարելի էր .
 Ուստի հրամայեց որ Պօղոսն առնեն ,
 Ընդ հսկողութեամբ զայն բերդը բերեն .
 Կատաղած ժողովուրդն գոռար ձայնիւ սուր —
 « Այդ մարդը վերցուր , մէջտեղէն վերցուր » :
 Երբ բերդին հասան՝ Պօղոս կանգ առաւ ,
 Հազարապետին դառնալով ըսաւ . —
 « Բան մը խօսելու հրաման տուէք » .
 Հարցուց զօրապետն — « Յունարէն գիտէ՞ք .
 Միթէ չէ՞ք դուք այն վատ եգիպտացին
 Որ իբր չորս հազար սրիկայից խումբին
 Ապստամբութեանն պարագլուխն եղաւ ,
 Դրոշակը բացաւ , անապատն ելաւ :
 « Ես Հրեայ մարդ մ'եմ՝ Տարսոն քաղաքէն »
 Պատասխան տուաւ Պօղոս լրջօրէն ,
 Խնդրեց հրաման , խօսիլ ամբօխին
 Որ հաւաքեալ էր հոն բերդին առջին :

Հազարապետը հրաման տուաւ ,
Պօղոս ալ բերդին սանդուխը ելաւ .
Ձեռքը շարժելով ուղերձն սկսեց ,
Ամենուն վրայ լուսթիւն տիրեց :

28. ՈՒՂԵՐՁ ՊՕՂՈՍԻ

Սանդուխին վրայ Պօղոս արդ կանգնած ,
Սառար բաղմութիւն դինք շրջապատած ,
Ձեռքը կը շարժէ , ձայնը կ'արձակէ ,
Եբրայեցերէն լեզուով կը գոչէ —
« Մարդիկ , եղբայրներ , հայրեր , լսեցէք ,
Իմ կենսագրութեանս լաւ ականջ դրէք : —
Հրեայ մարդ մ'եմ ես ի Տարսոն ծնած ,
Դամաղիէլի դպրոցն կրթուած .
Հայրենի օրէնքն խստիւ պահէի ,
Ձեզ պէս Աստուծոյ ձայնին անսայի .
Ձէի խնայեր մեծը կամ պզտիկ ,
Կապելով , բանտով , էրիկ թէ կնիկ
Կը հալածէի , կը չարչարէի ,
Ձանոնք մինչեւ իսկ մահուան մատնէի :
Գիտէք , ծերակոյտն և քահանաներ ,
Ինձ տուած էին հրովարտականք ,


Որ ես Դամասկոս քաղաքը երթամ ,
Եթէ Յիսուսի հետեւող գտնամ ,
Ձայն երուսաղէմ բերեմ կապելով ,
Հաւատքի բերեմ ծածով տանջանքով .
Երբ ճամբան էի , Դամասկոս չեկած ,
Լոյս մ'է կը ծագի իմ շուրջս յանկարծ ,
Ո՛հ , գետինն ինկայ , երեսիս վրայ
Ձայն մը լսեցի , ահաբեկեցայ : —
Սաւուղ , Սաւուղ , զիս ինչո՞ւ հալածես , —
Ահով գոչեցի . Տէր իմ , դու ո՞վ ես : —
Ես Յիսուսն եմ , այն Նազովրեցին ,
Ձոր դու հալածես , հնչեց ձայնն ուժգին .
Իմ հետս եղողներն թէն լոյսն տեսան ,
Ձայնն չլսեցին և ոարսափեցան :
Ո՛հ , Տէր , ի՞նչ ընեմ , իրեն հարցուցի ,
Դամասկոս գնա՛ , ըսաւ , հոն ըսուի
Քու ստանձնելի այլ և այլ պարտքեր
Ձորս քեզի համար սահմանած է Տէր :
Սչքերս կուրացան այն պայծառ լոյսէն ,
Ուստի ընկերներս ձեռքերէս բռնեն
Դամասկոս տանին , ուր և ես կեցայ
Մինչեւ այցելեց ինձ Անանիա :
Սա էր օրինաց մի պաշտպան ուխտեալ
Այր աստուածավախ , բարի վկայեալ ,
Քովս եկաւ , Սաւուղ , վեր նայէ , ըսաւ ,
Մեր հարցը Աստուած բարեհաճեցաւ ,

Որ իր կամքն ճանչնաս, այն Արդարն տեսնես,
Եւ Տէր Յիսուսի քաղցրը ձայնն լսես :
Պիտի վկայես դու բոլոր մարդկանց
Այն բաներն զորս ես տեսած եւ լսած :
Արդ ինչ կուշանաս, եւ եւ մկրտուէ,
Լուսն քու մեղքերդ, Տեսուն անուն կոչէ :

* * *

Արդ Երուսաղէմ՝ դարձայ վերստին,
Երբ աղօթէի ի մէջ տաճարին .
Մտացս վրայ եկաւ յափշտակութիւն,
Տեսայ Յիսուսի պայծառ դէմքն սիրուն,
Լսեցի իր ձայն, կ'ըսէր, արդարցիր,
Երուսաղէմէն շուտով դուրս ելիր .
Զպիտի անսան քու վկայութեան,
Զոր դու պիտի տաս այս Ժողովրդեան .
Պատասխանեցի, անոնք գիտեն Տէր,
Որ հալածէի հաւատացեալներ,
Ժողովատանց մէջ ոմանք ծեծէի,
Ոմանք ալ խաւար բանտը դնէի .
Գիտեն որ ծառադ Սուրբն Ստեփաննոս,
Երբ քարկոծուելով եղաւ մարտիրոս,
Հանդերձքն պահէի սպաննիչներուն
Կամակից էի սպաննուելուն :
Դարձեալ ձայնն ըսաւ, — Գնա՛ դու իսկոյն
Քեզ հեթանոսաց խրկեմ՝ ես հեռուն » :

Երբ հեթանոսաց կոչումն իմացան,
Նորէն կատաղի աղաղակ բարձան, —
« Վերցնուր այդ մարդը, վերցնուր աշխարհէն,
Ապրիլ չի վայրեր ատոր » կը գոչեն :
Կը կանչուուէին, հանդերձքն նետէին,
Օդն հողով, փոշով կը լեցնէին .
Հազարապետն բերդն հրամայեց բերել
Պօղոսն, ծեծելով հոն հարցաքննել,
Թէ ի՞նչ յանցանքով ձերբակալուած էր,
Ինչո՞ւ Ժողովուրդն յուզեալ կանչուուէր :
Երբ կաշիներով Պօղոսն կապեցին,
Սա գնաց հարցուց հարիւրապետին —
« Արժան է ծեծել այդ Հռովմայեցի,
Առանց քննութեան եւ դատաստանի » :
Հարիւրապետն ալ հազարապետին
Երթալով պատմեց խօսքերն Պօղոսին .
Նա ալ երբոր այս բանը իմացաւ,
Պօղոսն կապելուն համար շատ վախցաւ .
Զայն ազատ ձգեց եւ յաջորդ օրուան
Թողուց Պօղոսի խնդրոյն դատաստան :



29. ՊՕՂՈՍ ԵՒ ԼԻՒՍԻԱՍ

Առաւօտ եղաւ , ատեանն կազմեցաւ ,
Սրահը ստուար բազմութեամբ լեցաւ .
Հազարապետն ալ Պօղոսն իջեցուց ,
Եւ զայն ատեանին առջին կանգնեցուց :

* * *

« Մարգիկ , եղբայրներ , Պօղոս կը գոչէ ,
Խիզճա բոլորովին հանդարտ , մաքուր է ,
Ոչ ոք կարող է ինձ դէմ բան մ'ըսել
Ուխտած եմ Տէրոջ առջին կեանք վարել » :
Բահանայապետն , վասն Անանիա ,
Գովը կանգնողին հրաման կուտայ ,
Որ զարնեն ուժգին Պօղոսին բերնին ,
Բայց Պօղոս գոչէ Անանիային ,
« Բեշ պիտի զարնէ Աստուած , ձեւիւմ պատ ,
Որ նստիս դատել օրինաց համեմատ
Եւ օրէնքէն դուրս , առանց դատելու
Հրաման կուտաս ինձի զարնելու » :
Բոլորտիքն կանգնողք ապշած կը պոռան
Միթէ կ'անարգես Տեառն մեծ քահանան :
Պօղոս կը գոչէ — « Եղբայրք , չէի գիտեր ,
Որ Անանիան մեծ քահանայ էր ,

Զի գիրքն արգիլէ իշխանն անարգել
Եւ ժողովրդեան պետն չարախօսել » :
Ժողովին մի կողմն Սաղուկեցիներ
Կանգնած , իսկ միւսն Փարիսեցիներ .
Պատեհութենէն Պօղոս օգտուելով ,
« Փարիսեցի եմ , գոչէր բարձր ձայնով ,
Յարութեան համար է որ հալածուիմ ,
Մեռեցոյ յոյսին համար կը դատուիմ » :
Ատեանը յուզի , երկպառակութիւն ,
Գոռում և գոչում , մեծ շփոթութիւն ,
Զի Փարիսեցիք հաւտան յարութեան ,
Եւ կանգնին անոր ստտար և պաշտպան .
Մինչ Սաղուկեցիք յարութիւնն ծաղրեն ,
Հոգի և հրեշտակ լսկ ցնորք սեպեն :
Աղմուկն կը մեծնայ , յուզումն սաստկանայ ,
Հազարապետը դողայ և վախնայ ,
Որ մի գուցէ գան , Պօղոսը խլեն
Եւ զայն գալլերու նրման յօշոտեն .
Հրաման կ'ընէ , զինուորներն գալով
Բերգն տանին Պօղոսն , պահեն ապահով .
Իսկ Տէրն գիշերանց ըսէ Պօղոսի .
« Մի վախնար բնաւ , եղիր քաջարի .
Երուսաղէմի մէջ ըրածիդ պէս ,
Հռովմայ մէջ ալ պիտի վկայես » :

* * *

Առաւօտ կ'ըլլայ, քառասուն Հրեաներ,
Անէծքով, երգմամբ են միաբաներ,
Որ իրենց բերանն բան մը չէնեն,
Մինչեւ Պօղոսի կեանքը վերցունեն.
Խնդրեն ժողովէն, ջանան համոզել
Հազարապետը, Պօղոսն հոն բերել.
Իսկ իրենք դարան պիտի պատրաստեն
Եւ Պօղոսն ճամբան յանկարծ մեռցունեն:

* * *

Անդ կար Պօղոսի արդ մի քեռորդի,
Եւ դաւադրութիւնն իրեն յայտնուի.
Իսկոյն գայ բանը պատմէ Պօղոսին,
Պօղոս զայն խրկէ հազարապետին,
Պատանին բոլորն մի առ մի պատմեց,
Եւ հազարապետն բանն երբ ստուգեց,
Իրեն քով ժողովեց հարիւրապետներ
Եւ երկու հարիւր արի զինուորներ.
Եւ եօթանասուն զինուոր ձիաւոր,
Եւ երկու հարիւր ալ դեղարդաւոր:
Զինուորացս գունդ Պօղոսն գիշերով,
Փախցուց, գրաստ մը զայն հեծցունելով:
Նամակ մ'ալ տուաւ, ուղղեալ Փելիքսին,
Յանձնարարելով այս Հռովմայեցին,
Զոր Հրեայք պատրաստ էին մեռցունել,
Թէև յանցանք մը հնար չէր գտնել.

Խնդրեց որ կանչէ ամբաստանիչներն
Եւ անձամբ քննէ անոնց խնդիրներն:
Պօղոս ճամբուն մէջ լաւ պաշտպանուելով,
Ողջ առողջ հասաւ կուսակալին քով.
Սա կարգաց նամակն, ըսաւ Պօղոսին,
«Ամբաստանիչներդ երբոր հոս հասնին,
Քեզ իմ քովս նորէն կանչել պիտի տամ,
Իրաց վիճակին լաւ տեղեկանամ»:
Պօղոսը նորէն զինուորաց յանձնեց,
Հերովդի պալատն պահել հրամայեց:



30. ՊՕԴՈՍ ԵՒ ՓԵԼԻՔՍ

Որսն ձեռքէ փախաւ, Հրեայք զայրացան,
Հինգ օրէն ետե կեռարիւ իջան.
Մի քաջ փաստաբան, Տերտիւղոս անուն,
Առաջնորդ եղած էր Հրեաներուն.
Անանիա, ծերեր, երեւելիներ,
Եւ բազում ուրիշ ամբաստանիչներ,
Փելիքսի եկան, ատենան բացուեցաւ,
Պօղոս պալատին մէջտեղն բերուեցաւ:
Տերտիւղոս նախ լաւ մը շողորթեց,
Եւ Փելիքսի սիրտն դրաւել փորձեց.

Յետոյ ծանրացաւ Պօղոսի վրայ .
 Զանի հարուածեց ուժգին , անխնայ .
 Կը կոչէ զանի այր խռովարար ,
 Այր ապականիչ , որ բոլոր աշխարհ
 Կը մոլորցունէ , օրէնքը կաւրէ ,
 Եւ յանդգնելով տաճարն իսկ պղծէ .
 Առաջնորդէ խումբին այն Նազովրեցւոյն ,
 Ամէն տեղ հանէ ապստամբութիւն :
 Ապա Լիւսիան ալ ամրաստանեց ,
 Որ Պօղոսն անոնց ձեռքէն ազատեց :
 Տերտիւղոս նստի , դադրի խօսելէ ,
 Եւ բոլոր Հրեայք գոչեն — Այդպէս է :

* * *


Այժմ կուսակալը Պօղոսն հրաւիրէ ,
 Որ իրեն համար Բն. պատասխանէ .
 Տերտիւղոսին ծանր ամբաստանութիւն
 Պօղոս կը հերքէ խօսքերով սահուն .
 Յարութեան խնդրոյն վրայ ծանրանայ ,
 Որոյ համար ինք ատեանը կենայ :
 Ժողովին առջև իր դաւանութիւն ,
 Գրաւէ ամենուն խոր ուշադրութիւն :
 « Պաշտեմ ես սրտանց հայրերնուս Աստուածն
 Եւ մարգարէից մէջ բոլոր գրուածն .
 Նաեւ օրինաց կը համակերպիմ ,
 Ի բոլոր սրտէ զայն կը դաւանիմ .

Կը հաւատամ ես նաեւ յարութեան ,
 Արդարք , մեղաւորք , յետ իրենց մահուան ,
 Գերեզմաններէն պիտի արձակուին ,
 Երկինք կամ դժոխք երթան և ապրին » :
 Յետոյ կը պատմէ թէ ինք ընծաներ
 Եւ ողորմութիւն ազդին կը բերէր .
 Զինք տաճարին մէջ մաքրուած գտնեն ,
 — Այս է իր յանցանք — զինք ձերբակալեն ,
 Կ'ըսէ , պարտ էին Փելիքսին դիմել ,
 Ապօրինաւոր էր զինք նեղել , տանջել :
 Փելիքս այլ աւուր ձգէ դատաստան ,
 Մինչ գայ Լիւսիան , պատմել ամէն բան
 Հազարապետին հրաման կ'ընէ ,
 Պօղոսն չզրկել արտօնութենէ ,
 Այլ թողուլ անոր ազատ տեսակցել ,
 Կարօտութենէ բնաւ չնեղուիլ :

* * *

Քանի մ'օրէն գան Փելիքս և Դրուսիղա ,
 — Սա էր անոր կինն և ազգաւ Հրեայ —
 Պօղոսն կը կանչէ իր ներկայութեան ,
 Լսել Յիսուսի հաւատքին ճամբան .
 Ազդեցիկ կերպով Պօղոս քարոզէր ,
 Նախ արդարութեան վրայ կը ճառէր .
 Իսկ երբոր անցաւ նա ժողովարութեան ,
 Եւ նկարագրեց դալու դատաստան ,

Փեղիքս յուզեցաւ, և գոյնը նետեց,
 Խիղճը զինք խայթեց, գողալով գոչեց. —
 Դու հիմա քնա, գնա՛ գուհիս,
 Քեզ նորէն կանչեմ երբ ատենը դայ.
 Փեղիքս կը յուսար նաեւ դրամ կորզել »:
 Ուստի շատ անգամ զայն կուտար կանչել,
 Ո՛հ երկու երկար տարիներ անցնին,
 Փեստոս յաջորդէ թշուառ Փեղիքսին.
 Փեղիքս Հրէից աչքն կուզէ մոնալ
 Ուստի Պօղոսը թողու բանտարկեալ:



31. ՊՕՂՈՍԻ ԲՈՂՈՔՆ ԱՌ ԿԱՅՍԻ

Արդ Փեստոս կուգայ նախ երուսաղէմ
 Եւ Հրեայք փութան երթալ անոր դէմ,
 Կ'աղաչեն իրեն Պօղոսն բերել տալ,
 Հոն իրենց առջին անոր դատն տեսնալ.
 Սակայն գաղտնապէս դաւ էին նիւթած,
 Ճամբան սպաննել, քաղաք չհասած,
 Բայց Փեստոս անոնց խնդիրը մերժեց,
 Եւ Կեսարիա իջնել հրամայեց.
 Զի հոն դատաստանն պիտի տեսնուի,
 Ամբաստանութիւնն հոն պիտի բերուի:


Մի քանի օրէն Կեսարիա կ'իջնան
 Եւ յաջորդ օրը կը բացուի ատեան,
 Փեստոս հրամայէ, Պօղոս կը բերուի
 Ամբաստանողաց առջին կը կանգնի:
 Հրեայք արդ կ'ընեն ամբաստանութիւն,
 Պօղոս պատասխան կուտայ ամենուն.
 Կը հերքէ, մերժէ բոլոր ըսածնին,
 Կըսէ, « Ես երբեք անոնց օրէնքին,
 Տաճարին, նաեւ վեհափառ կայսեր
 Դէմ որեիցէ յանցանք չեմ գործեր.
 Ասոնք սուտեր են, իրենք են հնարած,
 Որոնք մինչև իսկ մտքէս չեն անցած »:
 Փեստոս ուզելով Հրեայք գոհացունել,
 Զայն երուսաղէմ կուզէ իջեցունել.
 Պօղոս կը գոչէ զայրոյթով վսեմ, —
 « Կայսեր ատեանը ահա կայնած եմ,
 Կայսեր բողոքեմ, կը դիմեմ կայսեր,
 Հոն պէտք է բերուին մեր բոլոր դատեր.
 Դու ինքդ լաւ գիտես որ ես անպարտ եմ,
 Անիրաւութիւն երբեք ըրած չեմ.
 Եթէ ըրած եմ մեռնելու արժան
 Որեւէ յանցանք, կամ որեւէ բան
 Պատրաստ եմ մահուան պատիժն իսկ կրել,
 Եթէ կարող են ապացուցանել:
 Զիս ահա չնորհել, ոչ, ոչ հնար չէ,
 Կայսեր բողոքեմ, այսքանս կը բաւէ »:

Խորհրդականներ արդ կոչեց Փետտոս ,
 Եւ ապա խօսքը ուղղեց առ Պօղոս .
 Հաղորդեց նմա իւր վըճիռն վերջին , —
 « Կայսեր բողոքես , քեզ խրկեմ կայսրին » :

* * *

Մի քանի օրէն Ագրիպպաս արքայ ,
 Բերենիքէի հետ գայ ի Կեսարիա .
 Փետտոս ամէն բան արքային պատմէ ,
 Եւ անոր վերջին որոշումն խնդրէ :
 Ագրիպպաս ըսաւ , « Ես ալ կը բաղձամ ,
 Որ այդ մարդն լսեմ և երեսն տեսնամ » .
 Փետտոս խոստացաւ որ յաջորդ օրը
 Զայն պիտի տեսնէ իր Թագաւորը :
 Հետեւեալ օրը արքան , Թագուհին ,
 Շքեղ հանդէսով ատենանք բազմին .
 Պօղոսը բերեն , մէջտեղ կանգնեցաւ ,
 Փետտոս ոտք ելաւ և այսպէս ըսաւ . —
 « Ագրիպպաս արքայ , ով ատենաբանք ,
 Այս Պօղոսը որ դուք հոս կը տեսնաք ,
 Հրեայք համօրէն բերեն իմ ատենն ,
 Երուսաղէմի մէջ և ձայն բարձան —
 Վերցուր աշխարհէն , պէտք է նա մեռնի ,
 Թէև բնաւ չէր մահուան արժանի .
 Նա ալ բողոքեց վեհափառ կայսեր ,
 Ուստի Հռովմ խրկել էի որոշեր .

Քայց յանցանաց գիր մ'ալ պէտք է խրկեմ ,
 Սակայն չեմ գիտեր թէ ես ինչ գրեմ .
 Ուստի , ով արքայ , ձեր առջին բերի ,
 Որ նա ձեր ատենան լաւ մը քննուի .
 Ապա յանցանաց գիրն կը պատրաստեմ
 Եւ զայն վեհափառ կայսեր կը խրկեմ » :
 Ագրիպպաս արքան տուաւ հրաման ,
 Որ Պօղոս իրեն ըլլայ փաստաբան :



32. ՊՕՂՈՍ ԵՒ ԱԳՐԻՊՊԱՍ

Ագրիպպաս արքան և իր Թագուհին ,
 Զօրականներով դան ի միասին .
 Շքեղ զարդարեալ ատենանք նստած ,
 Պօղոս առաքեալն մէջտեղը կանգնած ,
 Զեռքն կ'երկնցունէ , այրական ձայնով
 Իր ճառն սկսի հետեւեալ կերպով . —
 « Ագրիպպաս արքայ , պատեհ համարիմ
 Որ այսօր ձերին առջին կը կանգնիմ ,
 Ամբաստանութիւնքն բոլորն հերքելու
 Զոր Հրեայք ինձ դէմ ջանան բերելու :
 Հրէից կրօնին դուք լաւ տեղեակ էք ,
 Երկայնմտութեամբ արդ մտիկ ըրէք : —

Ի մանկութենէ , իբր Փարիսեցի ,
 Բժականդիր եմ Տեառն օրէնքի ,
 Բոլոր Հրեայներ վկայ կը կոչեմ
 Որ ճշմարտութիւն է ինչ որ պատմեմ :
 Ատեանն եմ կեցած և հոս կը դատուիմ ,
 Քանզի յարութեան յոյսը դաւանիմ .
 Ագրիպպա արքայ , յէջ ինչպէս թուի ,
 Մեռելոց յառնելն անհնար երեւի .
 Միթէ Տէր Աստուած Ամենակարող ,
 Մեզ յարուցանել արդեօք չէ՞ կարող :
 Պարտք համարէի Յիսուսն հալածել
 Նազովրեցիին անունն իսկ ջնջել .
 Երուսաղէմի մէջ , ինչէր իսկ չըլի ,
 Յիսուսն դաւանողն միշտ հալածէի ,
 Մասնակից եղայ բազմաց սպանման ,
 Գործակից էի ամէն հալածման .
 Քահանաներէն հրաման առած ,
 Ո՛հ , քանի՜ անմեղներ եմ բանտարկած .
 Ժողովարանաց մէջ կստիպէի
 Հայհոյել զանուն Յիսուս Քրիստոսի ,
 Մինչև հեռաւոր տեղեր երթալով ,
 Կը հալածէի մահ սպառնալով .
 Երբ օր մ'երթայի ես ի Դամասկոս ,
 Քահանաներուն հրամանն դրած ծոցս ,
 Մէյ մ'ալ , ո՞վ արքայ , ի ճանապարհին
 Շուրջս լոյս մը ծագեց , պայծառ , երկնային .

Արեւին լոյսէն նա դերազանց էր ,
 Իմ և ընկերացս ահ ու դող կ'ազդէր .
 Զիերն խաչեցան , մենք սարսափեցանք ,
 Բոլորս ալ մէկէն դետինք ինկանք ,
 Զայն մը ահարկու լսեցի տեղէս . —
 « Ո՞վ Սաւուղ , Սաւուղ , լի՞ ի՞նչ հալածես ,
 Դժուար , խիստ դժուար է քեզ ազացել
 Եւ խթանին դէմ կենալ , կից զարնել » :
 Արիւնս սառեցաւ , ահով գոչեմ ես . —
 « Ո՛հ Տէր , դուն «Վ Է» , Տէր իմ , դու ո՞վ ես » :
 Զայնն նորէն հնչեց , մեզմ բայց խիստ ազդու ,
 « Ես եմ Յիսուսը զոր հալածես դու :
 Օ՛հ , արի , կանգնէ , քեզի երեւցայ
 Որ քեզ ինձ ընեմ պաշտօնեայ , վկայ ,
 Վկայ , այն բոլոր տեսած բաներուդ ,
 Վկայ , ևս յետոյ քու տեսիլքներուդ .
 Պիտի ազատեմ քեզ ժողովրդէն ,
 Եւ հեթանոսաց բոլոր երկիւղէն .
 Անոնց քեզ խրկեմ որ աչքերն բանաս ,
 Խաւարին մէջը անոնց լոյս ըլլաս ,
 Որ սատանայէն զանոնք ազատես ,
 Եւ Տէր Աստուծոյ զայնս առաջնորդես ,
 Որպէս զի առնեն մեղաց թողութիւն ,
 Եւ այսպէս ըլլան կցորդ Սուրբերուն » :
 Ագրիպպա արքայ , ես այն երկնային ,
 Ազդու , ահաւոր , ահեղ , տեսիլքին ,

Բնաւ անհնազանդ և անհոգ չեղայ ,
Այլ իսկոյն խօսքը քարոզել ելայ .
Նախ ի Դամասկոս և Երուսաղէմ ,
Ապա Հրէաստան , միշտ քարոզել եմ .
Եւ հեթանոսաց , թէ մօտն թէ հեռուն ,
Ես քարոզեցի ապաշխարութիւն .
Դառնալ Աստուծոյ և պտուղ բերել ,
Ապաշխարութիւնն գործքով ցուցունել .
Այս էր իմ յանցանք , ուստի կ'որոշեն
Որ ձերբակալեն զիս և սպանեն :
Սակայն Աստուծոյ օգնութիւնն հասաւ
Եւ ողջ առողջ զիս մինչ այստեղ բերաւ ,
Մինչ քարոզած եմ մեծի պղտիկի ,
Սուրբ գիրքէն դուրս բան չսորվեցուցի .
Թէ Քրիստոսի պէտք էր չարչարուել
Եւ մեռելներէն յարութիւն առնել .
Նա է միակ լոյս , յոյս ժողովրդեան ,
Նա ցրուէ խաւարն հեթանոսութեան» :
Փեստոս ընդմիջէ Պօղոսն , և գոչէ . —
« Պօղոս , շատ ուսումն քեզ խելագարէ » :
« Ես չեմ խելագար , Փեստոսդ պատուական ,
Վեհ ձայնիւ Պօղոս կուտայ պատասխան .
Ճշմարտութիւն են բոլոր այս խօսքեր ,
Զգաստ են սրտիս ամէն խորհուրդներ :
Թագաւորն , որոյ առջին ես կանգնիմ ,
Գիտէ այն բաներն զորս ես դաւանիմ ,

Քանզի ծածկաբար անկիւն մը չեղան ,
Եւ գաղտնի մի տեղ չկատարուեցան .
Ո՛վ դու վեհափառ արքայդ Ագրիպպաս ,
Մարգարէներուն դու կը հաւատամ .
Այո՛ , հաւատաս , հարկ չէ հարցունել ,
Եւ պատասխանիդ պէտք չէ սպասել » :
Ագրիպպաս արքան դարձաւ Պօղոսին ,
Հեգնական ձայնով ըսաւ խնդաղին —
« Քիչ մնաց որ դու զիս եւս համոզես ,
Քիչ մնաց որ զիս Քրիստոնեայ ընես » :
Անվհերս Պօղոս կը պատասխանէ —
« Ո՛հ կը խնդրէի բարին Աստուծմէ ,
Որ ոչ թէ միայն արքան առանձին ,
Այլ Բոլոր աշխարհ Քրիստոնեայ լինին » :

* * *

Մի խոր լռութիւն , ձայներն դադրեցան ,
Երբայ , կուսակալ ոտքի վրայ ելան ,
Եւ դուրս ելլելով միմեանց ըսեն . —
« Հրեայք ի՞նչ կ'ուզեն այս անմեղ մարդէն .
Մարդը անպարտ է , յանցանք մը չունի ,
Արժանի մահուան և կախաղանի » :
Ագրիպպաս յարեց , խոր մի հառաչով ,
« Հնար կար այս մարդն ազատել փութով ,
Եթէ նա չըլլար կայսեր բողոքած » ,
Ուստի կը վճռեն որ Պօղոս կապուած

Հռովմ խրկուի վեհափառ կայսեր ,
Հրէից ուզածն ալ արդէն այս էր :

33. ՆԱԽԱԲԵԿՈՒԹԻՒՆԸ

Նաւը պատրաստ է , առադաստը բացուած ,
Դէպի Իտալիա երթալ որոշուած .
Հարիւրապետ մը , Յուլիոս անուն ,
Գլուխը անցած իր զինուորներուն ,
Խումբ մը կապուածներ առջեւ ձգէ
Եւ զանոնք դէպի նաւն կ'առաջնորդէ :
Անոնց մին արդէն մենք լաւ կը ճանչնանք ,
Պօղոսն է անի զոր ատեանն տեսանք .
Միւս ընկերներէն նա կը տարբերի ,
Ուրախ է զուարթ , դէմքը կը փայլի :
Բոլոր կապուածներն նաւն կը մտցունեն ,
Զանոնք իրենց խուցերն կը տեղաւորեն .
Նաւապետն կուտայ իր հրամաններ ,
Իսկոյն նաւաստիք հանեն խարիսխներ :
Փչեցէք հովեր , տարէք Առաքեալն ,
Նա իր հետն ունի Տէր Ամենակալն :

* *

Յաջորդ օր նաւը Սիդոն կը հասնի ,
Յուլիոս կուտայ հրաման Պօղոսի ,
Որ ցամաք ելլէ , եղբարց քով երթայ ,

Իր կարօտութեանց օգնութիւն գտնայ :
Լիւկիայի Մեռա քաղաք կը հասնին ,
Ուրիշ նաւ մտնեն թողուն զառաջինն :
Հոս հովեր սաստիկ փչել սկսին ,
Մինչեւ կըրետէ ծովն ալեկոծին .
Սա կ'ըլլայ իրենց պատճառ նեղութեան ,
Խարիսխը ձգեն , կրետէ կը կենան :
Երբ նորէն կուզեն ճանապարհն ելլել ,
Պօղոս կը ջանար զանոնք համոզել ,
Որ դեռ սպասեն , զի պիտի կրեն
Բազում նեղութիւն երբ անկէց ելլեն :
Բայց հարիւրապետն Պօղոսի խօսքին
Ականջ չէր դնէր , այլ նաւապետին :
Հազիւ թէ մեղմիկ փչել սկսաւ ,
Նաւուն խարիսխը խսկոյն հանուեցաւ ,
Եւ կրետէի եզերքն քերեւով
Յամրաքայլ երթար նաւը սահելով :

* * *

Յանկարծ երկինքը ծածկեն սև ամպեր ,
Թանձր մի խաւար չորս կողմ է պատեր .
Ահեղ որոտում , շանթ , փայլակ , կայծակ ,
Գոռում և գոչում լսուին շարունակ .
Եւ տեղափարափ անձրեւներ իջնան
Ամպերու մէջէն , հեղեղանման :
Ծովն ալեկոծի , կ'եռայ , փրփրայ ,
Նաւը ալեաց ձեռք խաղալիկ կըլլայ .

Պահ մը վեր ելլայ — վեր մինչև ամպեր ,
 Յետոյ կը նետուի խոր , խոր անդունդներ •
 Աջ կողմը շրջի , ձախ կողմը շրջի ,
 Եւ ծովուն ջրովն կ'ողողի , լեցուի •
 Բոլոր այս շրջուն տան բնակիչներ ,
 Բառնան ահռելի , սուր աղաղակներ :
 Նաւն փոթորկէն աստ անդ կը նետուի ,
 Զայն առաջնորդել է անկարելի •
 Ուստի զայն յանձնեն ալեացը ծովուն ,
 Անզուսպ , սանձարձակ կատաղի հովուն •
 Կղզեաց կղզւոյն ետեւը կիյնան ,
 Եւ հազիւ մակոյկն ազատել կրնան •
 Սորա միջոցով , և այլ օգնութեամբ ,
 Նաւն տակէն կապեն մեծ գոլարութեամբ ,
 Որպէս զի չիյնան յորձանուտ տեղեր ,
 Նաւաստիք ժողովն արդ առագաստներ :
 Ալեկոծութիւնն օր քան զօր աճի ,
 Հովը սաստկանայ , փոթորիկն կատղի •
 Կը պարտաւորին այլ ևս չսպասել ,
 Բոլոր բեռները ծովուն մէջ նետել •
 Քանի մ'օր յետոյ գործիքներն նաւուն ,
 Զեռքովն յանձնեն ալեացը ծովուն :
 Յերեկը արեւն բնաւ չծագիր ,
 Լուսին և աստղեր գիշերն չեն փայլեր •
 Տխուր և խաւար բոլոր բընութիւն ,
 Յոյս անհետացեալ , չկայ փրկութիւն •

Բոլոր ճամբորդներ օրերէ հետէ ,
 Անօթի , ծարաւ , լքեալ են ոյժէ :

* * *

Քաջարին Պօլոս միայն չէ լքեալ ,
 Նման Յիսուսի , Փրկչին իւր օրհնեալ ,
 Որ Գալիլիայի ծովն երբ կը յուզի ,
 Ահեղ փոթորկովն , հովով սոսկալի ,
 Եւ ամենուն սիրտ վախով լեցունէ ,
 Հանգիստ , անխռով ինքը կը ննջէ :
 « Ո՛վ մարդիկ » , գոչէ Պօլոս բարձրաձայն , —
 Ամենուն աչքեր առ Պօլոս դառնան •
 « Ո՛վ մարդիկ , ինչո՞ւ ինծի չանսացիք ,
 Երբ ըսի , պէտք էր Կրետէ մնայիք •
 Ո՛հ , այս նեղութիւնք և տառապանքներ ,
 Յայնժամ կըլլային աւելորդ բաներ •
 Քաջ եղէք սակայն , և հաւատացէք ,
 Որ դուք բնաւ վնաս պիտի չկրէք •
 Աւաղ , մեր նաւը պիտի խորտակի ,
 Բայց ոչ ոք մեզմէ պիտի կորսուի :
 Գիտէք , գիշերըս ինչ պատահեցաւ ,
 Աստուծոյ հրեշտակն ինծի երեւցաւ •
 Ես Անորէն եմ , զանի կը պաշտեմ ,
 Ուստի ըսաւ ինձ որ բնաւ հոգ չընեմ •
 — Մի՛ վախնար Պօլոս , նա ինծի ըսաւ ,
 — Կայսեր առջեւը ելլելու մօտեցաւ •
 Ուստի ինայէ Աստուած ամենուն ,

Լոկ +է+ համար , յայսմ յուզեալ ծովուն : —
Ուստի սիրտ առէք , քանզի Տէր Աստուած
Միշտ կատարած է զոր ինչ խոստացած .
Սակայն պարտինք մենք ջանալ , աշխատիլ ,
եւ լաւ ապահով կողի մը հասնիլ » :

* * *


Տասն և չորս օրեր , ցերեկ և գիշեր ,
Այեաց և հոգմոց դէմ նաւն կը կռուէր .
Ազրիական ծովն զայրացած կատաղած ,
Վերջին հարուածն տալ էր պատրաստուած :
Ի կէս գիշերի նաւաստիք կարծեն ,
Թէ ցամաք երկրի մը մօտեցեր են .
Գնդակն կը ձգեն , գրկաշափ քսան ,
Ապա տասն և հինգ գրկաշափ գտան ,
Արդ որ մի գուցէ ժայռի վրայ նետուին ,
Ետեւի կողմէն չորս խարխիւ ձգուին .
Եւ մեծ անձկութեամբ հսկեն , սպասեն ,
Որ արշալոյսին ծագումն ողջունեն :
Կը փորձեն փախչիլ արդ նաւաստիներն ,
Ծովն իջեցունել ջանան մակոյկներն .
Դարձեալ Պօղոսն է , այն այլն հեռատես ,
Որ այս նպատակն և անմիջապէս
Ի դերեւ հանէ : Հարիւրապետին
Կը դիմէ , և սա իսկոյն մակոյկին
Պարաններն կտրել հրամայէ ,
Այսպէս մակոյկը ծովը կը ձգէ :

Արշալոյսն ծագէր , Պօղոս աղաչէր
Խրաքանչիւրին , որ դար հաց ուտէր .
— Այս ալ , կըսէր նա , է նաեւ միջոց
Մեր ազատութեան , հոգւոյ թէ մարմնոց . —
Կը քաջալերէր , կը խրախուսէր , —
« Մաղ մ'իսկ չի պիտի իյնայ գլխէն ձեր » :
Ինքն առաւ հացը , գոհութիւն տուաւ ,
Ամենուն առջին կտրեց և կերաւ :
Նաւուն բնակչաց բոլորը համրեց ,
Էր երկու հարիւր եօթանասուն վեց .
Բոլորը կերան , լաւ մը կշտացան ,
Ծովը թափեցին մնացեալ ցորեան :

* * *

Հասաւ առաւօտն , ծագեց արեգակ ,
Յամաքը տեպան , բայց ոչ համարձակ .
Ծոց մը տեսնէին , խորշ մը կերեւէր ,
Նաւն դէպ' հոն ուղղել իրենց փափաքն էր .
Ուստի խարխիւներն ծովը ձգեցին ,
Ղեկին կապերը նաեւ թուլցուցին .
Առագաստներն ալ նորէն բացուեցան ,
Դէպի ծովախորշն յառաջ մղուեցան .
Նաւը խորշին մէջ լաւ մը խրեցաւ ,
Առջեւի կողմէն աւազը մտաւ .
Ահեղ ալիքներ , ետեւի կողմէն ,
Նաւուն խորտակումն ի գործ կը դնեն .
Ձինուորներն փորձեն կապեալքն սպաննել ,

Որ կարող չըլլան կեանքերնին փրկել .
 Իսկ հարիւրապետն ի սէր Պօղոսի ,
 Արդիւնց անոնց խորհուրդքն յողի ,
 Հրաման ըրաւ որ ո՛վ որ կրնայ ,
 Ինքզինք ազատէ և ցամաքն ելլայ .
 Ոմանք լողալով , ոմանք փայտերով ,
 Յամաքը հասան , ազատ , ապահով ,
 Իւրաքանչիւրի անձն ազատեցաւ ,
 « Ոչ մէկուն գլխէն մազ մը կորսուեցաւ » :



34. ՊՕՂՈՍ ԵՒ ԻԺԺ

Ծոփն հանդարտեցաւ , հոփն ալ դոհ եղաւ ,
 Երբ իր բռնութեան յաղթանակն տեսաւ —
 Ահագին նաւը ջախջախեալ , փշրեալ ,
 Անզուսպ տարերքէն չարաչար պարտեալ :
 — Մեղիտէ կղզին է — նաւորդք դոչեն ,
 Երբոր ցամաքը նախ ոտք կը կոխեն :
 Թէեւ բարբարոս՝ այս կղզեցիներ ,
 Սակայն և այսպէս էին մարդասէր .
 Նաւաբեկելոց մեծ սէր ցոյց տուին ,
 Հիւրընկալեցին , կրակ վառեցին ,
 Զայնս պաշտպանեցին ցուրտէն , անձրեւէն ,
 Կերակուր բերին որ անոնք ուտեն :

Արդ Պօղոս շուտ մը խռիւ երբ ժողովեց ,
 Եւ կրակին վրայ դնելով վառեց ,
 Յանկարծ իժ մը մեծ , ահեղ , թունաւոր ,
 Զեռքին կը փակչի . — տեսիլ ահաւոր —
 Պօղոսի ձեռքէն գաղանն է կախուած ,
 Ամէնուն սիրտը վախով է պատած .
 Պօղոս կը կենայ հանդարտ , անխռով ,
 Իրաց վախճանը տեսնելու յոյսով :
 Կղզեցիները զայս որ կը տեսնան ,
 Իրարու նային և կը փոփսան —
 « Այս մի մարդասպան պէտք է որ ըլլայ
 Եւ թէեւ ծովէն ազատեցաւ նա ,
 Սակայն աստուածներն զանի հալածեն ,
 Իրաւունքն զանի մահուան կը մատնեն » : —
 Պօղոս արդ թօթուէ գաղանն ի ձեռաց ,
 Եւ զայն բոցավառ կրակն է ձգած :
 Կղզեցիք սակայն դեռ կ'ակնկալեն ,
 Որ նա ուռենայ գաղանին թոյնէն ,
 Կամ՝ յանկարծակի իյնայ և մեռնի ,
 Աստուծոյ վրէժն իրմէն առնուի :
 Ի զուր սպասեն , ֆլառ մը չեղաւ ,
 Ուստի կարծիքնին իսկոյն փոխուեցաւ .
 Կ'ըսեն իրարու — Սա է մէկ Աստուած ,
 Ահեղ փոթորկով մեր կղզին իջած : —

* * *

Անդ ի Մեղիտէ այր մի մեծատուն ,

Ագարակատէր, Պօպղիոս անուն,
Պօղոսն ընդունեց և չառ մեծարեց,
Ագարակին մէջ զայն հիւրընկալեց:
Պօպղիոսի հայրն, թանջքով բռնուած,
Անկողնոյ մէջը հիւանդ էր պառկած,
Պօղոս քոֆն գնաց և աղօթք ըրաւ,
Եւ ապա ձեռքերն անոր վրայ դրաւ,
Հիւանդն աղէկցաւ, թանջքն զանի ձգեց,
Պօղոսի ձեռքով Տէրն զայն բժշկեց:
Ջայս որ լսեցին, կղզւոյն չորս կողմէն
Բազում հիւանդներ իրեն կը բերեն.
Պօղոս ամէնը սիրով բժշկեց,
Եւ սէր ու յարգանք, պատիւ ընդունեց.
Եւ երբոր նորէն կը պատրաստուէր
Որ դէպ ի Հռովմ՝ ճանապարհ ելլէր,
Ամէնը բերեն Պօղոսին ընծայ
Որ կարօտութիւն և պէտք չունենայ:

* * *

Երեք ամիսէն ուրիշ նաւ մտաւ,
Դէպ ի Իտալիա ճանապարհ ելաւ,
Պատիզոս հասաւ, ուր հաւատացեալ
Եղբարք աղաչեն իրենց հիւր ըլլալ:
Ուստի եօթն օրեր կեցաւ անոնց քով,
Ճանապարհ ելաւ յետոյ նոյն նաւով:
Երբոր ողջ առողջ Հռովմ ժամանեն,
Եղբայրներն գալով զայնս գիմաւորեն:

Ասի Պօղոսի մխիթարութիւն,
Սփոփանք տուաւ, և մեծ բերկրութիւն:
Քաղաքն երբ մտան բոլոր կապուածներ,
Իսկոյն բանտն տարին գունդ մը զինուորներ:
Սակայն Պօղոսին եղաւ հրաման,
Որ նա ստանայ զինուոր պահապան.
Որ իրեն յատուկ տունը բնակի,
Եւ իր կոչումովն ազատ զբաղի:
Երեք օր յետոյ Պօղոս հրաւիրէ,
Հրէից մեծերն, իր տունը կանչէ.
Անոնց կարճ կերպով յայտնէ թէ ինչո՞ւ
Պարտաւորեալ էր Հռովմ խրկուելու:
— «Մարդիկ, եղբայրներ, յայտնի ըլլայ ձեզ,
Որեւէ կերպով յանցաւոր չեմ ես.
Ոչ ժողովրդեան, ոչ սովորութեանց
Դէմ եմ ես գործած, չեմ օրինազանց.
Սակայն և այնպէս, Երուսաղէմի
Հրեաները զիս Հռովմայեցի
Կուսակալին ձեռքն տուին, մատնեցին,
Հարցաքննեցին, զիս ատեանն տարին.
Յետ կրկին, կրկին, և խիստ քննութեան,
Իմ վրաս բնաւ յանցանք չգտան.
Եւ որոշեցին ազատ արձակել,
Եւ զիս Հրէից դաւէն ազատել.
Ասոր Հրեայներ հակառակեցան,
Սպաննուելուս վրայ հաստատ կեցան:

Ուստի հարկ էր ինձ կայսեր բողոքել,
 Եւ այն կատաղի խումբէն կեանքս փրկել:
 Ուստի ուղեցի որ ձեզ ևս տեսնամ,
 Եւ այս շղթաներն ձեզի ալ ցոյց տամ.
 Զայս ես կը կրեմ ուրախութիւնով,
 Եւ Իսրայէլի խոստմանը յուսով»:

Հրաւիրեալք ըսին, « Լուր չունին բնաւ,
 Ոչ բերանացի և ոչ նամակաւ,
 Ոչ բարի, ոչ չար, իր վրայ գիտեն,
 Եւ իրմէն լսել բոլորն պատրաստ են:
 Այո՛, պէտք է որ ստոյգն իմանան,
 Զի այդ « աղանդը » չունի շատ պաշտպան »:
 Որոշեալ մի օր նորէն հաւաքուին,
 Լսեն Պօղոսի խօսքերն խնդազին,
 Եւ առաւօտէ մինչև իրիկուն,
 Նա կը քարոզէր անոնց ամենուն.
 Յոյց տար յօրինաց, ի մարդարէից,
 Յիսուս է Քրիստոսն ի յաւիտենից:
 Ոմանք հաւտային, այլք կը մերժէին,
 Եւ անմիաբան վերադառնային:
 Սակայն ժողովը դեռ չէր աւարտած,
 Եւ ամէն մէկը իր տեղը դարձած,
 Երբ Պօղոս վերջին խօսք մը ըլլալով,
 Անոնց սա խօսքերն ուղղեց եռանդով. —
 « Յայտնի, համարձակ կ'ըսէ Սուրբ Հոգին,
 Ինչպէս կը կարգանք ի մարդարէին. —

Այս ժողովուրդին գնահ և ըսէ,
 Իրեն դառն վիճակն առջեւը պարզէ.
 Լսէք ու լսէք բայց չէք իմանար,
 Տեսնէք ու տեսնէք և չէք հասկնար.
 Միրտը թանձրացաւ այս ժողովուրդին,
 Եւ ականջներով ծանրը լսեցին,
 Գոցեն աչքերնին որ ալ չտեսնեն,
 Սրտով իմանան, ականջով լսեն,
 Եւ ապաշխարեն նաև դարձի գան,
 Եւ բժշկութիւն, փրկութիւն գտնան:
 Ուստի Տէր Աստուած հեթանոսներուն
 Խրկեց ծառաներն ի ձրի փրկութիւն.
 Հրէից մերժումն անոնք ընդունին,
 Հրէից խոստմունքն անոնց կրկնուին»:
 Ժողովն ցրուեցաւ, Հրեայք զայրացան,
 Տունէն դուրս ելան, եղան ցիր ու ցան,
 Մին միւսին հետ վիճաբանելով,
 Յամառութեան մէջ յարատեւելով:

* * *

Սուրբ գրոց ոսկի թելն արդ հոս բեկանի,
 Հոս ալ մեր գրիչ կանգ առնել պարտի.
 Սուրբ Առաքելոցն կենաց պատմութիւն,
 Աւարտէ երկտող սա ծանօթութիւն. —
 « Պօղոս իր վարձած տունը բնակէր,
 Ճիշտ երկու տարի անխոնջ քարոզէր ».
 Բոլոր իրեն քով եկող ունկնդրաց,

Իր նիւթն , բնաբան միշտ սա էր ըրած . —

«Աստուծոյ գալու թագաւորութիւն ,

Հաւատի միայն , յիս քրիստոսին» :

Առանց արգելքի , համարձակ խօսէր ,

Եւ կենաց սերմերն ազատ սերմանէր :

* * *

Յետ բանտարկութեան երկոցուն ամաց ,

Ըստ ճիշդ և ստոյգ , շատ վկայութեանց ,

Պօղոս Հռովմէն ազատ կ'արձակուի ,

Նորէն աշխարհիս չորս կողմ կը շրջի .

Կերթայ Սպանիա և Մակեդոնիա ,

Դէպի Կրետէ և փոքր Ասիա .

Ամէն տեղ պարզէ ճանապարհն կենաց ,

Նորէն Հռովմ տարուի շղթայով կապուած .

Անդ նաև ցնծմամբ մարտիրոսանայ ,

Յիսուսի սիրոյն իր կեանք զոհ կուտայ :

Ընթացքն կատարէ , հաւատքը պահէ ,

Բարի պատերազմն արդ աւարտած է .

Կանցնի կարգ սրբոց և հրեշտակաց ,

Կ'ընդունի Փրկչէն պըսակըն փառաց :



Երես	Տող	Սխալ	Ռդիղ
9	23	ուրացաւ	ստացաւ
»	24	մ'ազարակն	ազարակն
10	5	մէջքէն	մէջ տեղէն
21	6	որդւոյն	որդւոյդ
22	17	մարդոց մէջ	մարդու մը
25	1	հրեշտակը	հրեշտակ
26	10	դուք կախեցիք	սպաննեցիք
40	14	բերանը	բերանն
42	1	պարտաւոր	պատրաստեալ
»	12	ընելիքդ	ընելիքըդ
43	15	ընկեր անման	ընտիր աման
45	18	Լուդղայի	Լիւդղիայի
48	12	ատեն	արդէն
54	18	եւ	նաեւ
58	2	սպասեն	սպասէն
»	24	կը մնայ	մնայ
59	16	դէմ էին խռովեր .	հետ էին աւրուեր
61	3	այն	ալ
62	10	Պիտիդիայէ	Պիտիդիայի
68	10	կը նետեն	նետեն
»	21	մէկ եկեղեցի	եկեղեցիի
69	5	տուներ	դռներ
71	21	իւր	շատ
74	22	արեան	ատեն
78	8	Լիւդիա	Լիւդիային
79	1	ամէն	բազում
87	7	էին	էին լոկ
88	6	եհրէք	երբէք
92	4	ատենանէն	արիւնէն
111	15	պատեն	պատիւ
120	24	հրամայէ	կը հրամայէ
124	23	նոյն նաւով	ցամաքով
127	13	մերժումն	մերժածն

31

334-333

2x

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0071897

ՀՀ Ազգային գրադարան



NL0071896

ՀՀ Ազգային գրադարան



NL0071895

